# Դրօշակ

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

1906

№ 3 (169) XVI ՏԱՐԻ ՄԱՐՏ 1906

# ԴՐՕՇԱԿ

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

Adresse: RÉDACTION DU JOURNAL „Droschak" GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ" ՕՐԳԱՆ

A.R.F. BURO

## „ԴԱՀԻՃՆԵՐԻ ԴԱՀԼԻՃՈՒՄ"

Շքեղ, բարձրակամար դահլիճ: Մէջ տեղը պայտաձև մի սեղան, ծածկած կարմիր մահուդով—ակամայ նշանակը յորդառատ արեան: Շուրջը արիւնաքամ ժողովուրդների ներկայացուցիչները, հայ և թիւրք պատգամաւորներ, ոմանք հպարտ իրանց բարեմիտ պաշտօնով, միւսները մռայլ, թախիծը երեսին, ոմանք էլ գոհ՝ ներկայացուելիք քաղաքական կատակերգութեամբ, պճնուած պ ա լ ա տ ա կ ա ն բ ե մ ի ն յատուկ սարքերով... կենտրոնում Եղեռնի ձեռակերտողները, աստեղազարդ՝ բայց երբեք գնտակ չը տեսած կրծքով, բռնապետութեան նշանազգեստը հագին. վերնատանն էլ պալատական տիրուհիները, շրջապատուած „փայլուն" շքախմբով—մշտական հանդիսականը արքայավայել ողբ-կատակերգութիւնների...

„Ամբողջ մի տարի է, որ շարունակւում է հայ-թուրքական անմիտ կոտորածը—այսպէս սկսեց բացման ճառը կովկասեան փոխարքան՝ նա, որ ձիթենու ճիւղի անուան տակ՝ խողխողման հրամանը բերեց Պետերբուրգից—և իմ բոլոր ջանքերը՝ վերջ տալու այդ խռովութիւններին՝ չը կարողացան կանգնեցնել չարիքը.. Հարցն այն չէ, թէ ո՞վ է մեղաւորը այդ խռովութիւնների մէջ, այլ այն, թէ ի՞նչ միջոցներ կարող են իրօք դադարեցնել չարիքը, որ կործանում է երկրի ազգաբնակութիւնը՝ թէ նիւթապէս և թէ բարոյապէս—մի բան, որը ձեռնտու է միայն աւազակների և յեղափոխական կազմակերպութիւնների համար":

Ա ւ ա զ ա կ ն ե ր և

Յ ե ղ ա փ ո խ ա կ ա ն կ ա զ մ ա կ ե ր պ ո ւ թ ի ւ ն ը:

Երկու բառ, նոյնքան հեռու միմիանցից, որքան երկինքն ու երկիրը, բայց միշտ միացած ցարի հրովարտակների մէջ, փոխարքայական ճառերում և զօրապետների պաշտօնագրերով, իբրև անպատկառ անարգանք մէկին և անուղղակի յարգանք միւսին, իբրև դաւադիր կռիւ մէկի դէմ, որ ա ր դ ա ր ո ւ թ ե ա ն դրօշակիրն է, և աջակցութիւն միւսին՝ որ ա ւ ե ր մ ո ւ ն ք ի նշանակն է, ժխտումն արդարութեան...

Երկու բառ, որոնք երբէք և ոչ մի երկրում չեն միացել որևէ մտածողի երևակայութեան, հասարակագէտի ուսումնասիրութեան և քաղաքագէտի ըմբռնումների մէջ,—բայց որոնց դ ա շ ն ա կ ց ե լ ո ւ պատիւը պատկանում է ցարի փոխանորդին, այն ևս մի ժողովում, որ „կոչումն" ունի արմատախիլ անելու 15 ամսից ի վեր սանձարձակօրէն թագաւորող ա ւ ա զ ա կ ո ւ թ ի ւ ն ը, և որի դէմ կռւողն ու պայքարողը եղաւ միմիայն մի ուժ—յ ե ղ ա փ ո խ ո ւ թ ի ւ ն ը:

Այդ ամբարտաւան „շարադրութիւնը" մի արդարացումն և մի մեկնաբանութիւն գուցէ միայն ունի, այն՝ որ նա ստեղծագործւեց և արտասանւեց մի դահլիճի մէջ, որ հակառակ իր պճնւածքին և փայլին, կովկասեան արիւնոտ տարեգրութեան մէջ պէտք անւանել „դ ա հ ի ճ ն ե ր ի դ ա հ լ ի ճ", այն տեղը, ուր ապրեց, ծրագրեց, և գործադրեց մեծագոյն ոճրագործը—իշխան Գօլիցին, այն վայրը, որ արդարութեան գերեզմանոցն է, ուր խրախուսանքի արժանացան Եղեռնի բոլոր երևելի և աներևոյթ գործադրողները, սկսած հիներից մինչև նորագոյները—մինչև Նակաշիձէ, Անդրէև, Բըկով, Տարանօվսկի, Տակեաշվիլի, Օլերօվսկի և այն ամենը, որոնք դաւում են, առանց հրապարակ գալու, որոնք արիւն են թափում, առանց արիւն տեսնելու...

Եւ այժմ, այսքա՛ն աղետից ու աւերմունքից յետոյ երբ նոյնիսկ չարիքը վերացնելու տեսակէտից, անհրաժեշտ է հրապարակ բերել համակովկասեան թշւառութեան ի ս կ ա կ ա ն հեղինակներին, առանց որի այդ օրինակ համագումարները դրական արդիւնք տալ չեն կարող, նոյն փոխարքան, ցարական արդարադատութեան պայծառափայլ ներկայացուցիչը՝ չէ խղճահարւում պաշտօնապէս ասելու. „Հ ա ր ց ը ա յ ն չ է, թ է ո վ է մ ե ղ ա ւ ո ր ը ա յ ս խ ռ ո վ ո ւ թ ի ւ ն ն ե ր ի մ է ջ..."

Հարցը հէնց այդ է,—կը պատասխանենք մենք: Եւ պատիւ նրանց, որոնք հակառակ այդ պ ա շ տ օ ն ա կ ա ն նախազգուշացման, հակառակ Շիրինկինեան խուզարկիչների ազդած երկիւղին, քաղաքացիական պարտք համարեցին, մամուլի մէջ թէ ժողովներում, ճառերով թէ յօդւածներով, պնդելու և պահանջելու, որ քննւի՝ թէ ով է մեղաւորը, գտնւեն ոճրի հեղինակները, թէև գուցէ բարձրադիր, անմատչելի և շատ ապահով դահլիճներում փակւած... .

—„Մեղաւորը դուք էք, ցարի ներկայացուցիչներ, որ յեղափոխական կրակը մարելու նպատակով ժողովուրդը ժողովրդի դէմ քշեցիք և ոճիր տարածեցիք երկրի բոլոր ծայրերում. դուք, որ բռնակալական տանջանքը

սրբագործեցիք, քաջալեր եղաք սպանութեան, ոտի տակ տուիք նոյնիսկ ձեր օրէնքը, ոստիկանութիւնն ու զօրքը չարագործութեան միջոց շինեցիք, և դարձաք թելադրող ու հեղինակ համայնական ոճրագործութեան։ Ձեր տեղը պալատներն ու պաշտօնատները չեն, այլ մեղադրուողի նստարանն ու բանտը։ Ոճրագործ էք՝ թէև պաշտօնեայ, մարդասպան էք՝ թէև անշղթայ…"

Պալատական ժողովում այդ ճշմարտութիւնը, վաւերացուած հասարակաց անկախ կարծիքի կողմից, բարձրաձայն չը հնչեց այն „պարզ" պատճառով, որ այնտեղ՝ նոյնիսկ „ազատաբեր" մանիֆէստից յետոյ, թագաւորում էր ոստիկանական երկիւղի շունչը, և պատգամաւորներից շատերը՝ մի քանիսը անկեղծօրէն, միւսները յետին մտքերով տարուած, քաղաքական փափկանկատութեան հակառակ՝ ստիպեցին ձեռնոց գցել ոճիրի գլխաւոր հեղինակներին և կամ նրանց, որոնք չարագործների անմիտ և դժոխային գործիքն եղան, անփառունակ վարպետները արեան և աւերմունքի…

Սակայն, նոյնիսկ այդ պայմաններում յանդիմանութեան և բողոքի շեշտը գէթ մի անգամ հնչեց այն սեղանի շուրջը, ուր երբեմն թագաւորում էր միմիայն խոնարհ և լուռ համաձայնութիւն։ Եւ հէնց այն դահլիճի մէջ, ուր երբեմն հակահայկական սև ծրագիրներ մշակողը՝ Գօլիցին, շանթեր էր արձակում յեղափոխութեան հասցէին, սպառնալով հողին հաւասարել հայութիւնը, նոյն այդ քաղաքականութիւնը՝ իր հեղինակի հետ միասին՝ ենթարկուեց հրապարակային թունաւոր դատապարտութեան. ոգևորուած ներբող կարդացուեց յեղափոխութեան հասցէին, ուղղուած յատկապէս Դաշնակցութեան, և պալատական ժողովը՝ գէթ մի քանի ժամ՝ դարձաւ դատափետումն պաշտօնական ոճրագործութեան, ծաղր և հեգնութիւն այն բոլորի դէմ, ինչ որ մի քանի տարի առաջ գովքի և փառաբանութեան էր արժանացել։

Ի՞նչ գեղեցիկ դաս։ Այդ նոյն դահլիճների մէջ էր, որ Գօլիցին, 1903-ի անաջող մահափորձից յետոյ, ստացաւ թիւրք բէգութեան սրտաբուխ համակրանքը՝ համեմած հակահայկական սպառնալիքներով. և այսօր այդ նոյն տեղում՝ մահմեդական ժողովրդի անփայլ ներկայացուցիչները, նոյն իսկ նրանք, որոնք թիւրք ինտելլիգենցիայի տականք ու մրուրն են կազմում, շանթեր էին արձակում Գօլիցինի հասցէին, անէծք կարդում նրա անուան ու քաղաքականութեան։ Որքա՜ն թուք։ Որքա՜ն նախատինք։ Եւ եթէ այդ սատրապը, որ Պետերբուրգ ապաստանած, չի դադարում գաղտնաբար դաւեր լարել „ատելի" Կովկասի դէմ, ունի՝ չենք ասում մարդկային—շռայլութիւն է այդ—գէթ զինուորականի պատիւ, պէտք է վզիցը կապէ իր „գաղտնի զեկուցագրերի" մեծահատոր կապոցը և նետուի Նեվայի յորձանքների մէջ—միակ ելքը այս հրապարակային ծանր նախատինքից… Եւ թող „գօլիցինեան օրինակը" յիշատակելի մնայ նրա մեծ ու փոքր յաջորդների համար, որոնք „Դահիճների դահլիճներում" մշակւող նորագոյն ծրագիրների համար՝ պատասխան պիտի տան գալիք օրերին և յեղափոխութեան։

Այո՛, յեղափոխութեան, որին և պարտք ենք քաղաքական ներկայ այլակերպութեան համար, կատարուած շղթայակապ պետութեան բոլոր անկիւններում, նոյն իսկ Թիֆլիսի պալատի մէջ։ Յեղափոխութեան ուրականն էր, որ բաց արեց պալատի դռները ժողովրդական պատգամաւորների առջև. Նրա շուքի երկիւղից է, որ „ամենազօր" բարձրադիրները խորհրդի են նստում երեկւան „հպատակների" հետ. Նա է, որ չէ թոյլ տալիս „երդւեալներին" ձայն բարձրացնել ի պաշտպանութիւն քայքայւող ռեժիմի, և նա կը լինի, որ դուրս նետելով միապետութեան կառանից՝ չարիքների չարիքը—ցարիզմի գաղափարը, մաքրագործւած դահլիճների մէջ յաղթականօրէն կը բազմեցնի յեղափոխութեան վեհապետին—ժողովրդական կամքը։

---

## „ԴՐՕՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՈՒՂԱՐԿՒԱԾ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻՆ)

—

ԹԻՖԼԻՍ, մարտի 6.

Ոստիկանութիւնը, հրահանգած կենտրոնական կառավարութիւնից, շարունակում է զինաթափ անել հայ ժողովրդին։ Ղազախ զինաթափման գործը վերջացած է։ Բաքւի նահանգի մի քանի մասերում կատարւում են աններելի խստութիւններ՝ զինաթափման պատրւակների տակ։ Շատ տեղերում թուրքերը ազատօրէն զէնք են կրում։ Կառավարութեան տարբեր վերաբերմունքը դէպի հայերն ու թուրքերը սիրտ է տալիս վերջիններին։

—

ԲԱԳՈՒ, մարտի 8.

Գանձակից եկող լուրերը անհանգստացնող են։ Տեղական թուրք ղեկավարները խորհում են վրէժ լուծել իրենց խոշոր կորուստների համար, որ ունեցան գաւառում։ Ադմինիստրացիան թագուն կերպով աջակցում է նրանց։ Թուրքերը փորձում են վերաբնակւել հայոց թաղի մէջ կամ մերձականներում, մի հանգամանք որ կարող է նոր բարդութիւններ առաջ բերել։ Հայերը բողոքեցին այդ նենգաւոր մտադրութեան դէմ, պահանջելով, որ հայոց թաղին մօտեցող թուրքերը հսկողութեան տակ դրւին։ Այլապէս նրանք կարող են ընդհարումներ կամ սպանութիւններ առաջ բերել։

—

ԹԻՖԼԻՍ, մարտի 9.

Հայ-թուրքական պատգամաւորների ժողովը բացւեց փոխարքայի նախագահութեամբ։ Պատգամաւորների թիւը երկու կողմից մօտ 60 է։ Մասնակցում են կառավարչական բարձր պաշտօնեաներ։ Հասարակութեան մէջ հաւատ չը կայ դէպի ժողովը ու նրա հետևանքները։ Անցեալ փորձերը հիասթափեցրել են բոլոր շրջանները։ Սա համարւում է նոր խաղ կառավարութեան և թուրք պրովոկատորների կողմից։

# ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԱՐԻՒՆԱՀԵՂ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ

## ՊԱՏՃԱՌՆԵՐ ԵՒ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐ

(ՎԵՐՋ)

Ամփոփենք: Ծայրէ ծայր սև, արտասովոր մի իրականութիւն, ուր բոլոր ձախորդ, հակահասարակական, հակապրոգրեսիվ գործօնները, ձեռք ձեռքի տուած, չինական պատնէշ են ուզում բարձրացնել իրենց և դրսի աշխարհի միջև. մի մռայլ անապատական միակերպութիւն, որի անեզր ու խաւար փոնի վրայ չեն երևում լուսաւոր, յուսատու, կազդուրիչ կէտեր. մի արտասովոր, պաթօլոգիական հոգեբանութիւն, որի հիմքերը ամուր խարսխուած են դարերի գիշերի մէջ և որը բուժելու համար՝ անհրաժեշտ է երկար, անվերջ, քրտնաջան աշխատանք, մի յատուկ ու գերազանց բժշկականութիւն: Հարկաւոր է ուժեղ, կործանարար մի հողմ, որ փոթորկէ, տակն ու վրայ անէ հսկայական ճահիճը, թարմացնէ մթնոլորտը և հարթէ ազատ ու արգասաւոր դաշտ՝ նոր կեանքի բողբոջների համար:

Ո՞վ պիտի կատարէ այդ կարդինալ յեղափոխութիւնը...:

Մեզ մեղադրում են — պանիսլամիզմի ու սօցիալ-դեմօկրատիզմի կովկասեան իդէօլոգները — որ մենք, հայ նացիոնալիստներս, միայն հայ ժողովրդի մասին ենք մտածել և չենք զբաղուել նաև հարևան թիւրքերի կրթութեամբ ու դաստիարակութեամբ...

Ահա մի օրիգինալ պահանջ ևս: Նորընծայական խեղկատակութիւնը քաղաքագիտութեան հովեր է առնում և յաղթականօրէն հասկացնում է մեզ, որ սրանից տասնեակ տարիներ առաջ մենք պիտի նախատեսնէի՞նք փոթորիկը և պիտի մտածէինք նրա առաջն առնել... թիւրք ժողովրդը դաստիարակելով:

Բաւական չէր հայ ինտելիգենցիայի առջև դրուած սիզիֆեան գործը, կովկասահայ ու նոյնիսկ պարսկահայ առաջդիմութեան խնդիրը, տաճկահայերի արիւնոտ դատը՝ կապուած հազարաւոր մտահոգութիւնների ու գերմարդկային ճիգերի հետ, բաւական չէ, որ հայ գործօն երիտասարդութեանը բաժին է ընկել՝ պատմութեան մի չարաշուք անօրինութեամբ՝ ամենատաժանելի և ամենաապերախտ աշխատանքը — գործել մի դժոխային միջավայրում, առանց գործելու մի ազատ կայանի, շրջապատուած ամեն կողմից մարդակեր ցեղերով ու պետութիւններով, հալածուած և՛ Տաճկաստանում, և՛ Պարսկաստանում, և՛ Ռուսաստանում, հալածուած յաճախ նոյնիսկ հարազատներից, երբեք չը վարձատրուած հայ ժողովրդական դասի պաշտօնական «հովանաւորներից» — բաւական չէ այդ անօրինակ, պատմութեան մէջ չը տեսնուած մարտիրոսութիւնը՝ մենք, մի չնչին փոքրամասնութիւն, պիտի ստանձնէինք և թիւրք ժողովրդը լուսաւորելու գործը.. Չէ, այդ պահանջը ևս լրջութիւն չունի, ինչպէս միւս բոլոր պահանջները, նոյն աղբիւրներից բղխող: Հային երբեք չեն թոյլ տուել ազատ շունչ քաշել իր հայրենիքում, իր ճակատագրի մասին իսկ հոգալ շատ թէ քիչ ազատօրէն, նրա դպրոցներն են փակել, նրա հասարակական հիմնարկութիւններն են անդամալուծել, նրա ամբողջ ազգային գոյութիւնն են տակ ու վրայ արել, մահուան դատապարտել — նրան թոյլ տուե՞լ են ուրիշի մասին մտածել, հոգալ...

Բայց եթէ անգամ թոյլ էլ տային՝ պիտի կարողանա՞ր նա իր սեփական նախաձեռնութեամբ, իր ուժերով որևէ էական փոփոխութիւն մտցնել մի ժողովրդի կեանքում, որ միանգամայն տարբեր, բացառիկ է իր մտաւոր, հոգեկան ու բարոյական կենցաղով, իր սօցիալական բովանդակ կազմով, որի խորխոմները ընդհանուր գծերով ցոյց տուինք արդէն: Երանի չէ՞ր, թէ այդպէս լինէր... Բայց մենք կարծում ենք, որ դա ուտօպիստական, լաւատես մի հայեացք է.— թիւրքի կեանքը վերջ ի վերջոյ նա ինքը պիտի փոփոխէ ու բարւոքէ proprio motu, և ոչ հայերը, ոչ իսկ, իհարկէ, կովկասեան սօցիալ-դեմօկրատները, որքան էլ նրանք ջերմ պաշտպան կանգնեն թիւրք պրօլետարիատին, որքան էլ սրտանց փարեն թիւրքական վերածնութեան գործին:

Փոխադարձ օգնութեան սկզբունքը հէնց յարգելի է — տարակոյս չը կայ: Կուլտուրական հարևանների, մանաւանդապէս մօտիկ շփուող հայ ինտելիգենցիայի պարտականութիւնն է՝ հնարաւորութեան — [illegible] և շատ անձնուէր — [illegible] զարկ տալ մտքերի փրկարար խմորումին՝ մեր մահմեդական դրացիների մէջ: Թիւրք պրօլետարիատը՝ որ այսպէս թէ այնպէս, նորագոյն ինդուստրիալիզմի յորձանքն ընկնելով, կամաց-կամաց շփւում է միւս, աւելի քաղաքակիրթ ազգերի պատկանող պրօլետարիատների հետ՝ պէտք է, անշուշտ, աշխատել քաշել նաև դէպի նորագոյն գաղափարների հոսանքը, դէպի գիտակցական բանւորական շարժումը: Դա կենսական մտահոգութիւններից մէկն է Հ. Յ. Դաշնակցութեան, ինչպէս և միւս Կովկասում գործող կուսակցութիւնների համար: Աղէտների սկզբնաւորութիւնից իվեր՝ մեր կօմիտէների հրատարակած այլ և այլ թռուցիկները պարզ վկայում են համերաշխութեան այն զգացմանց մասին, որով նրանք տոգորուած են թիւրք աշխատաւոր ժողովրդի նկատմամբ: Այդ [illegible], որ տրամաբանօրէն բղխում է կազմակերպութեան հասարակական դաւանանքից և յատկապէս կովկասեան [illegible] կարգերի մասին ունեցած նրա հայեացքից՝ անշեղ կը գործադրուի և ապագայում:

Բայց մենք դարձեալ սխալ, ուտօպիական ենք համարում լաւատես յայտարարութիւններն այն կուսակցութիւնների, որոնք դիտում են թիւրք պրօլետարիատին, իբրև մի տեսակ փրկութեան խարիսխ, որը ոչ միայն պիտի ազատէ մեզ ջարդերի ու աւերումների մղձաւանջից, այլ և առհասարակ «տակից» պիտի յեղաշրջէ, վերածնեցնէ հարազատ ժողովուրդը...

Ամեն մի պրօլետարիատ, իբրև իր ազգի մի հատուածը, բաժանում է, այդ ազգութեան ժառանգականութիւնը, ատավիզմը: Սօցիալիստական գաղափարը, որքան էլ ինքնին հրապուրիչ ու մեծագործ լինի, չէ կարող շուտով կերպարանաւորել ուղեղները, չէ կարող հեշտութեամբ թօթափել հին, հաւաքական արատների զարհուրելի բեռը, որ մի թշուառ պատմութիւն փաթաթել է մահմեդական պրօլետարիատի վզին:

Վերջապէս, ժողովուրդները առհասարակ «տակից» չեն վերածնւում, — պատմութիւնը գոնէ չէ տալիս այդպիսի օրինակներ: Անշուշտ, մասսաներն են ժամանակի անիւը առաջ մղող հզօր գործօնը, բայց նրանց շարժումները գիտակցական ու նպատակայարմար դարձնելու համար՝ անհրաժեշտ է միշտ և ամեն տեղ մտաւոր կրթութեան որոշ աշխատանք, որ կատարւում է «պատմական փոքրամասնութեան» ձեռքով: Մի դարից աւելի է, ինչ սօցիալիզմի գաղափարը ծայր է առել արևմտեան Եւրոպայում և 75 տարի է, ինչ սկսել է պրօլետարական գործնական պայքարը կապիտալիզմի դէմ. և այնուամենայնիւ, այսօր Եւրոպայում, նոյնիսկ ամենազարգացած ու ամենաինդուստրիական երկրների մէջ, աշխատաւոր պրօլետարիատի — չենք ասում դեռ՝ գիւղացիութեան — մի ստուար մասը դուրս է մնում սօցիալիստական բանակից, չէ գիտակցում իր պատմական դերը, իր անտագօնիզմը կապիտալի հետ և նոյնիսկ յաճախ այդ կապիտալի ներկայացուցիչներին է վստահում իր շահերը, ճակատագիրը:

Մինչև որ թիւրք ժողովուրդը չը ծնէ գաղափարական կուռ, թէկուզ և փոքրաթիւ, բայց իր կոչման բարձրութեան վրայ կանգնած ինտելիգենցիայի մի բանակ՝ թիւրք պրօլետարիատի դատը, ինչպէս և առհասարակ թիւրքական առաջադիմութեան գործը մի քայլ անգամ չը պիտի առաջ գնայ: Սօցիալիստական շարժումը, աւելի քան որևէ այլ շարժում, կարօտ է ինտելիգենցիայի աջակցութեան: Անցել է ժամանակը, երբ՝ բարբարոսական մի հա-

# ՀԱՅ—ԹՐՔԱԿԱՆ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ

## ԴԱՐՁԵԱԼ ԶԻՆԱԹԱՓ

*ԹԻՖԼԻՍ, փետրւարի 9 | 22*

Մեր ընդհանուր կացութիւնը կարելի է բնորոշել մի բառով՝ „զինաթափում“։ Թիֆլիսում թէ գաւառներում զինաթափում են։ Այստեղ կատարւում են անվերջ խուզարկութիւններ զէնքեր գտնելու համար, որ մինչև այժմ անցել է համարեա ապարդիւն։ Պատճառը պարզ է. զէնք չը կայ այստեղ, ինչ գտնեն։ Գաւառներում գործում են յատկապէս նշանակւած վաշտեր. այսպէս Շուշիի շրջանում գեներալ Գալաշչապովն է, իսկ Ղազախի և Լօռու կողմերը գնդապետ Լեվենցկին։ Զինւորական առանձին մասեր փռած են գիւղերում նոյնպէս զէնքեր են պահանջում։ Շուշում գործն աւելի վատ կերպարանք ունի, որովհետև գեներալը զէնքից դուրս պահանջում է նաև ինքնապաշտպանութեան հայ պարագլուխներին։ Սա արդէն կատարեալ չարագործութիւն է, եթէ աւելին չասենք։ Մինչև այժմ ոչ մի թիւրք աւազակ, բէգ, պրիստաւ,—բոլորը չարագործներ—չը բռնեցին և չը պատժւեցին բայց շուշեցի երկու անմեղ հայեր՝ բժիշկ Բահաղրեան և Գերասիմ Շահնազարեան ո՛չ միայն բանտարկւեցին, այլ և պիտի աքսորւին Օրենբուրգի նահանգը վարչական կարգով։ Ահա ձեզ անձի անձեռնմխելիութիւն...

Յանցաւոր է յայտարարւում հայը, որ թոյլ չը տւեց իրեն խողխողել ոչխարի պէս։ Այս բոլորը արդիւնք է այն բանի, որ թուրքերը ամեն տեղ ընկճւել են ու քիթերը կախել։ Քանի մեզ էին կոտորում, կառավարութիւնը հետևում էր laisser faire ի քաղաքականութեան. հէնց որ մենք սկսեցինք պատասխանել, սկսեց զ ի ն ա թ ա փ ո ւ մ ը։ Գոնէ կարողանան կամ կամենան զինաթափ անել նաև թիւրքերին, բայց այդ առայժմ գոնէ չի երևում, և անկարելի է, աւազակ թիւրքը երբէք զինաթափ չի լինի։ Երևակայելի է հայ ժողովրդի վիճակը երբ նա կը մնայ անզէն բարբարոս զինւած թաթարների մէջ։ Այս պայմաններում, յոյս ունենք, հայերն այնքան յիմար չեն լինի, որ զէնքերը յանձնեն, նրանք վար կը դնեն, չեն գործածի, եթէ նրանց չը ստիպի թուրքը, բայց յանձնել, դա կը լինի մեծագոյն ապուշութիւնը, կատարեալ ինքնասպանութիւն։

Հայերին զինաթափ անելու երկրորդ նպատակն է հնար տալ թուրքերին գարնանը սար բարձրանալ—եայլաղ։ Այս եայլաղի հարցը նրանց դժբախտութիւնն է, նրանք գիտեն, որ թէ հայերը կամենան, մի հատ թուրք տեղից շարժւել չի կարողանայ. հին ցաւոտ հարց է, քանի քանի անիրաւութիւններ, վնասներ են կրել հայերը թուրք „եայլաղաւորցիների երեսից“։ Մինքենդի կոտորածը նրանք արին անցեալներում, այդ գիտէք։ Բացի այդ ահագին խուժան զինւած, համախմբւում է և շարժւում դէպի լեռները հայ գիւղերի միջով։ Ներկայ պայմանները հասկանալի է, թէ ինչ չարիք կը դառնան, եթէ թոյլ տրւի նրանց համախմբւիլ։ Հայերը գիտեն այդ, և ի հարկէ կ՚արգելեն, մանաւանդ այս տարի։ Ահա թէ ինչու թուրքերը շարունակ դիմում են կառավարութեան և խնդրում հայերին զինաթափ անել, որ իրենք կարողանան ազատ շարժւել։ Բայց այդ նրանց չի աջողւի։ Ցաւոտ հարց է, տեսնենք ինչպէս կը վերջանայ։ Առ այժմ կառավարութեան վերաբերմունքը չափազանց նենգաւոր է ու կասկածելի։ Հայ գիւղեր են ռմբակոծւում, իսկ ո՛չ մի թուրք գիւղ չը պատժւեց։

Ղազախի շրջանում մօտ 34 թիւրք գիւղ մասամբ աւերակ է ու հրդեհւած հայերի ձեռքով, մասամբ էլ իրենք են թողել փախել։ Հայերը վնասներ չեն կրել, բացի մի երկու գիւղի մասնակի թալանից կամ աւերից, ո՞վ է մեղաւոր, որ թուրքերն այժմ այսպէս տուժում են, հայն էլի պատրաստ է զէնքը վար դնել, եղբայրութեան ձեռք մեկնել, բայց հանդիստ չեն մնում այս տգէտ թշուառականները, կամ աւելի ճիշդ ոստիկանութիւնը շարունակ ոտքի է հանում։ Ղազախի թուրքերը ամենից աւելի տուժեցին հայերից, չը նայելով որ հայերից թւով շատ մեծ են։ Ճարերը կտրած նենգութեամբ գալիս են Թիֆլիս լուր բերում կառավարական շրջաններին, թէ հայերը այնտեղ Սաքօ անունով մէկին „թագաւոր“ են հռչակել, որ հարկ է վերցնում թէ՛ թիւրքերից և թէ՛ հայերից։ Եւ կարո՞ղ էք երևակայել այդ անհեթեթ լուրը հաւատացողներ է գտել այս տեղի զինւորական և քաղաքացիական, բարձր շրջաններն՝ նոյնիսկ Մալաման՝ այդ մասին խօսք է արել մի հայի հետ։ Մեր կացութեան բոլոր դրագիկօ-կոմիզմը տես, որ ստիպւած ենք այդպիսի աբսուրդները հերքելով զբաղւել։

Այստեղի բանտից մօտ հարիւր հոգի քաղաքական յանցաւոր համարւածներ արձակւեցին, բայց ընդհանուր առմամբ դրութիւնը նոյն է, զինւորական կացութիւնը շարունակւում է։ Վայ է գիշերը մի քիչ ուշ փողոցում երևալ, մի քանի տեղ խուզարկում են և ինչ անտանելի ձևով... Բոլոր նշաններից երևում է, որ այս դրութիւնը դեռ երկար է շարունակւելու։

Պետական դումայի հրաւիրելուն էլ ոչ ոք չի հաւատում. ընտրութիւնների մասին խօսում են, գրում են հէնց այնպէս, աւելի հաւանականն այն է, որ մենք վերադառնանք միանգամայն նախկին դրութեանը, արդէն ցենզուրան իրօք կարելի է վերականգնած համարել, ինչպէս և ժողովների և անձի ազատութեան կատարեալ բացակայութիւնը։ Բռնապետութիւնը դեռ երբէք Ռուսաստանում աւելի խիստ չի եղել, քան այժմ է։

Երէկ մի լուր եկաւ Իգդիրից, որ չափազանց նշանակալի է։ Հաստատ աղբիւրից հաղորդում են, որ կովկասեան իշխանութիւնը մտադիր է մեր սահմանի վրայ կազմել համիդիէի պէս գնդեր, սահմանի վրայ հսկելու համար։ Այդ գործը յանձնւած յայտնի աւազակապետ և քիւրդ ցեղապետ Ալաշրաֆ բէգին, նա յանձն է առել 2000 հոգուց բաղկացած մ ի լ ի ց ի ա ն քրդերից կազմել այդ գունդը և հսկել սահմանի վրայ։ Ալաշրաֆ բէգը այն Հիւսնի բէգի եղբայրն է, որ 1877 թւի պատերազմին կռւի ամենատաք ժամանակը դաւաճանեց Տէր-Ղուկասովին և իր ամբողջ քիւրդ գնդով անցաւ թիւրքաց կողմը։ Եւ այժմ սոսկալի չարագործութիւններ է կատարում Ալաշկերտում հայերի գլխին փաշայի տիտղոսով վարձատրւելուց յետոյ։ Այսպիսով սահմանի մի կողմը յանձնւում է մի եղբօրը,

միւսը՝ միւս։ Կարող էք երևակայել, թէ ինչ ոճիրներ պիտի կատարուէին հայ ժողովրդի գլխին։ Այսպէս է վարձատրում ռուս կառավարութիւնը հայ ժողովրդի „դարաւոր հաւատարմութիւնը“։

---

## ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԻ ՎԱՅՐԵՐՈՒՄ

Թիֆլիս, 20 յունուարի

Զինուորական դրութիւնը կաշկանդել է կեանքը. Գրիազնովի սպանութիւնից յետոյ մեծ յուզում է տիրում զինուորականների շրջանում։ Հրաման են արձակել բոլոր զէնքերը յանձնել կառավարութեան՝ երեք օրւայ ընթացքում։ Այդ ժամանակամիջոցից յետոյ ում մօտ զէնք գտնեն, նրան դատապարտելու են զինուորական օրէնքով, իբրև ապստամբի։ Պարզ է, որ այս հրամանը չէ վերաբերում Թուրքերին, որոնք ազատ կարող են իրենց զէնքը պահել, որովհետև ո՞վ պէտք է դրանց ապստամբ համարի։

Բոլոր նշաններից երևում է, որ նոր դէպքեր պիտի պատահեն։ Ուր ապստամբութիւն կայ, այնտեղ արդէն „օրինական“ պատճառ ունեն՝ կառավարութեան ուժը յարգել տալու, ուր շարժում չկայ, նորանոր խստութիւններով առիթ ձեռք կը բերեն նոյնն անելու. նպատակ են դրել ամէն մի ընդդիմադրական ուժ խորտակել՝ զէնքի զօրութեամբ։ Գործադրուած միջոցները յիշեցնում են Արակչէեւների, Մուրավեօվների դարը։

Երևանեան նահանգում առայժմ հանգիստ է։ Նախիջևանի և Ջահուկի դէպքերը շատ են վախեցրել և վհատեցրել տեղական Թուրքերին։ Նրանք կարծես կորցրել են իրենց հաւատը դէպի դաշնակիցները։ Զանգեզուրում ընդհարումները շարունակւում են։ Նոր յարձակումներ են տեղի ունեցել հայ գիւղերի վրայ. բայց հաւանօրէն բոլորն էլ յետ կը մղեն։ Վարանդայում աւերել է Ղաջարը, այդ անառիկ աւազակաբոյնը։ Դրանով Վարանդան բոլորեց իր սահմանները։ Մնացել է միայն Մալիբէկլուն։ Նախիջևանիկի, Փիրջամալի, Վարազաբոյնի հերոսական կռւի մասին արդէն յայտնի կը լինի ձեզ հեռագիրներից։ Այդ շրջանում Թուրքերը կարծես խաղաղւել են, շարունակութիւնը թողնելով կառավարութեանը։ Նոյնը Ջիւանշիրի ու Գանձակի կողմերը, թէև այնտեղ անհատական կամ մասնակի խմբական յարձակումներ լինում են ճանապարհորդների վրայ։

Առհասարակ պէտք է ասել, որ յաղթութիւնը տարել էինք, Թուրքերը այդ զգացել էին, հաշտութեան ճանապարհը հարթւել էր և նա կը կայանար, եթէ ռէակցիան չը յաղթանակէր, և դրանից նոր ուժ չը ստանային Թուրք շարժման պարագլուխ բէկերը։

Մեր առաջին անաջողութիւնը պէտք է համարել Մաքրամէնտի վրայ եղած յարձակումը։ Մեր կռւողները լինում են գիւղացիների հետ միասին մօտ 300 հոգի։ Բաժանւում են երկու մասի. գլխաւոր ուժը Համազասպի առաջնորդութեամբ պիտի յարձակում գործէր մի կողմից, իսկ Ասլանի խումբը գիւղի ետև անցած՝ պիտի կտրէր փախստականների ճանապարհը։ Բայց թշնամու ուժերին անտեղեակ լինելով—նրանք չեն իմացել, որ Ասլանի խմբի ետևը եղել են 3 Թուրք գիւղեր, լաւ զինուած,—Ասլանի խումբը ընկնում է երկու կրակի մէջ։ Մէկ կողմից վրայ են հասնում հարևան Թուրք գիւղացիները, միւս կողմից բռնում են Մաքրամէնտից փախչող Թուրքերի մի մասը։ Երկու կողմը բռնելով, Թուրքերը դիւրութեամբ օղակի մէջ են առնում Ասլանի խումբը (մօտ 25 հոգի)։ Թուրքերի բոլոր ջանքերը՝ օղակը սեղմել, ապարդիւն է անցնում։ Նրանք ամէն մի գրոհին զոհեր տալով յետ են քաշւում քարերի ետևը։ Այսպէս շարունակւում է մինչև փամփուշտների հատնիլը։ Բարեբախտաբար տղաները ունենում են նաև մաուզէրեան ատրճանակներ, որոնց օգնութեամբ յուսահատական քայլ են անում, ճեղքում են օղակը և անցնում, տալով 4 սպանւած և 6 վիրաւոր։ Ասլանն աննման քաջագործութիւններ է անում. բոլորը հիացած են նրա տաքտիկից, պաղարիւնութիւնից։

Յարմար տեղ է յիշատակել անհատական քաջագործութեան մի երկու բացառիկ դէպքեր համառօտ կերպով։ Առաջին դէպքը լինում է Ջահուկում։ Երբ Թուրքերը ամրանում են եկեղեցու զանգակատանը, ռուս զօրքի հրամանատարը կոչ է անում բոլոր կռւողներին, (զինուորների հետ լինում են 50 հոգի մերոնցից) թէ ով է համաձայն զանգակատուն բարձրանալ. Որպէսզի կարողանան շփոթեցնել դիրք բռնելուց Թուրքերին, հարկաւոր է եղել զանգակատան զանազան կողմերից յարձակւել։ Ոչ ոք դուրս չի գալիս, բացի մի հայից դարձեալ Ասլան անունով։ Սա ուզում է մեն մենակ բարձրանալ։ Չնայած, որ բոլորը հակառակւում են, նա զօրում է և հրացանը ձեռքն առած՝ բոլորովին մենակ սկսում է բարձրանալ։ Թուրքերը վերևում կանգնած սպասում են։ Հէնց որ երևում է Ասլանի գլուխը, իսկոյն որոտում են Թուրքերի հրացանները, բայց բարեբախտաբար Ասլանի միայն „փափախն“ է թռչում։ Ընկերները իսկոյն վար են բերում նրան, այլևս չեն թողնում երկրորդ փորձն անելու։ Նոյն օրը Ասլանը ընկնում է, զոհ գնալով իր մի ուրիշ յանդուգն քայլի։ Պատմում են, որ Ասլանի կռիւներին մօտ ականատես մի կազակ երեխայի նման հեկեկալիս է լինում Ասլանի դիակի վրայ...։

Միւս փաստը տեղի է ունենում Մալիբէկլուի կռւում։ Թուրքերի դիրքերից մէկը լինում է մի բարձր քերծի տակը, բոլորովին անտեսանելի՝ քերծի գլխին կանգնած մեր տղաների համար։ Ոչ մի հնարաւորութիւն չի լինում քերծի գլխից որևէ վնաս տալ Թուրքերին, մինչ դեռ սրանք բոլորովին ապահով իրենց դիրքում՝ շարունակ գնտակահարում են ուրիշ կէտերից գիւղին մօտեցող մեր տղաներին։ Այդ ժամանակ Քարինտակեցի մի երիտասարդ առաջարկում է, որ թոկով իրեն կապեն, կախ տան քերծի գլխից։ Փամփուշտները մատների արանքներում շարելով, կախւած իջնում է, մինչև որ բացւում է Թուրքերի դիրքը։ Չնայած, որ Թուրքերը յետևից բաց են անում նրա վրայ գնտակների տարափ, երիտասարդը յաջողում է նրանց բոլորին բշել և դիրքը գրաւել։

Բազմաթիւ են այդ տեսակ փաստերը։

---

## ԿՈՉ ԵՐԿՈՒ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻՆ

(1905 փետրւար 6—1906 փետրւար 6)

Քաղաքացիներ.

Ուղիղ մի տարի առաջ, մենք առաջին անգամ տեսանք արիւն, որ անտարբեր թափւեց և թափւում է հայ-Թրքա-

կան բորբոքուած ընդհարման մէջ։ 1905 թուի փետրուարի 6-ին, արիւնարբու միապետութեան ջանքերը—աջակցած հայ-թրքական բուրժուազիայի ու կալուածատէրերի, բեգերի ու խաների կողմից,—յաջողութեամբ պսակւեցին։ Կովկասում երևան եկաւ միջազգային թշնամանքի սարսափելի ուրուականը, որն այնքա՛ն անհրաժեշտ էր մեր ընդհանուր թշնամուն, մարելու ռուսական յեղափոխութեան բոցը, ճնշելու յեղափոխական և ագրարական շարժումը Կովկասում։ Եւ միապետութիւնը յաջողեց։

Արդէն մի ամբողջ տարի թափւում է թանկագին արիւնը Կովկասում։ Եւ այն միջոցին երբ Ռուսաստանում, բարրիկադների վրայ մեռնում են խիզախ մարտիկները յանուն ընդհանուր երջանկութեան և ազատութեան, Կովկասեան քաղաքներն ու գիւղերը ողողւում են եղբայրական արեան գետերով,—Արի՛ւն, անօգո՛ւտ ազատագրական գործին և պիտանի յետադէմ ճիւաղին—նոյն այդ միջոցին հայերն ու թուրքերը կոտորում են միմեանց ծառայելով այդպիսով աւելի միապետութեանը շահերին, աւելացնելով էլի մի քանի վայրկեաններ նրա կեանքին։ Մի՞թէ վայրագ գինւոր Ալիխանովը պիտի կարողանար այժմ իր արիւնահեղ գործը ի կատար ածել և խնդալ անպաշտպան ժողովրդի վրայ. մի՞թէ Գոլօշչապով ու գազիր գահի միւս մանկլաւիկները կարող պիտի լինէին սրբել Կովկասի հողի երեսից ամբողջ գիւղեր ու քաղաքներ։ Ո՛չ և ո՛չ…

Եթէ հայկական և թրքական աշխատաւոր մասսաները՝ ձեռք ձեռքի տուած, որպէս մի մարդ, արշաւէին այժմ միապետութեան դէմ և ոչ մէկը միւսի, եթէ նրանք իրենց նւիրական զոհերը բերէին նզովեալ աբսոլիւտիզմի մայր պատերի առջև, այն ժամանակ ռուսական յեղափոխութիւնը նրանց մէջ կը գտնէր յուսատու և քաջարի դաշնակիցներ։ Թրքական և հայկական ամէն գիւղ, բնակեցրած քաղցած և տառապած գիւղացիութեամբ, ծարաւ „հողի և կամքի", ինչպէս և տանջուած ռուսաց գիւղացիութիւնը, կը դառնային մի-մի ապստամբական ամրոց, ահարկո՛ւ և կործանի՛չ միապետական դահիճների համար։

Սակայն անցեալի խաւարը փոքր առ փոքր անհետանում է, բոլորն արդէն, թէ՛ բանւոր, թէ՛ գիւղացի, թէ՛ թուրքը և թէ՛ հայը յոգնած են սարսափներից, տանջանքներից և տառապանքներից։ Կովկասի սևամած երկինքը դարձրել է մեր կեանքը մի ինչ որ արիւնալից և անմիտ մղձաւանջ։ Այսօր տարեդարձն է, սակայն տարեդարձ կովկասեան եղբայրասպան առաջին կռւի մեծ վշտի ու տրտմութեան օր, օր մեծ սուգի… բայց Կայէնները դարձեա՛լ պէտք ունեն արեան, նրանց համար քիչ է արդէն թափւած արեան ծովը։ Եւ ահա թէ ինչու, դեռ մի քանի օր առաջ, պրովոկատոր—ոստիկանական բերանները յամառ լուրեր էին տարածում, որ իբր թէ, ազգերից մէկը պատրաստւում է յարձակւելու միւսի վրայ։

Թուրք և հայ քաղաքացիներ։ Ահարկու նզովքով պատասխանեցէք սուտ, նենգ Կայէնների զազիր դաւերին, և ամօթի կնիք դրօշմեցէք նրանց սև խղճին։ Մի՛ հաւատաք լուրերին։ Ո՛չ ոք արիւն չէ՛ կամենում, բացի նզովեալ դահիճներից։

Թող այսօրւան օրը անցնի, պարարւած ծանր և մութ յիշողութիւնների սուգով, թո՛ղ այսօր ձեր սրտերում ապրի՛ վիշտը—աղբիւր զղջանքի և վրէժխնդրութեան դէպի դահիճներն ու չարի կառավարութիւնը, մեր տառապանքների սկզբնապատճառները։ Մենք կոչ ենք անում ձեզ՝ դէպի խաղաղութիւն՝ յանուն ընկած անմեղ զոհերի, յանուն կենդանի մեռածների երջանկութեան…

Մենք հաւատում ենք, որ անհետ կը կորչի պրովոկատորների աշխատանքը և յայտնում ենք, որ ամենածայրայեղ միջոցների կը դիմենք, պատժելու այն ամէն մէկին, ով կը փորձէ արիւն թափել այս վշտալի և սգաւոր օրերին։

Քաղաքացիներ, դէպի խաղաղութիւն։

ՍՕՑԻԱԼԻՍՏ-ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ,
ԲԱԳՒԻ ԿՈՄԻՏԷ

6 փետ. 1906

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ

## ՆԱՄԱԿ ՏԱՐՕՆԷՆ

### ԱՌՎԱՌԻՆՃԻ ԴԷՊՔԵՐԸ

1905, նոյեմբեր 12

Հոկտեմբեր ամսի 1-ին, շաբաթ օր՝ երբ նոր պիտի բացւէր արշալոյսը՝ յանկարծ Առվառինճ գիւղը կը պաշարւի սարէն ձորէն եւ գիւղացւոց ելեւմուտքը կտրւի։ Պաշարողներն էին նախ բազմաթիւ թիւրք զօրքեր՝ մէկ վաշտ Մուշէն եւ Առաղ ու Դարդ գիւղերու մէջ մնացած զօրքեր. Առաքելոց վանքի եւ Խասգիւղի զօրքեր իրենց սպաներով եւ Մուշէն հասած հազարապետով եւ ամբողջ ոստիկանութիւնը իրենց պետերով՝ տուած հրամանին վրայ կը հասնին հոն. պալուքցի, խութեցի, գեղձմերցի քիւրդ աշիրէթներ կրօնամոլ հաճի Ֆիրօյի հետ. Թիւայ չէյխերը իրենց արբանեակներով, Մահմուտանցի քիւրդեր, Բրդագումի քրդեր, Մուշէն զինեալ թուրքեր առաջնորդութեամբ Տուրսուն եւ Արիֆ անուն թուրքերու եւ այլն եւայլն։ Այս բազմութիւնը, որ մինչեւ ժամը երկուքը 3000-ը անցած էր՝ պատուարելով թէ ձեր գիւղը ֆէդայի կայ, յանկարծ հարւածոյ հրացաններու պայթիւններով ու զոռում պոչումով դրան կուտան գիւղին վրայ, կը յարձակին, ջարդ եւ հրդեհ վայրենապէս կսկսին, չատ քամինի, չատ անլուր խժդժութեամբ խուճապը եւ իրարանցումը սկսած էր գիւղին մէջ, ուր 120 է աւելի թշուառ հայ ընտանիքներ արկղափակ մահուան կը սպասէին… Որոտումները, զինորներու եւ թուրք խուժանի զոռում պոչումը, ժողովրդի սարսափելի վայնասունը սարերը կը թնդացնէին, բայց անսալի կոտորիչներուն երբեք գութ ու կսկիծ չէին ազդեր։ Գրաւը գիւղը հասնելուն գիւղի չորս կողմէն զօրքերը հրդեհը բանկցուցին եւ հայ արեան ծարաւիները ձեռնարկեցին անմեղ ու անտէր հայ ժողովուրդը ջարդելու, որը ողջ ողջ հրդեհներուն կուտային, որը կը յօշոտէին, որը գնդակահար կը տապալէին անխնայ առանց սեռի եւ տարիքի խտրութեան… Ջարդը կը տեւէ մինչեւ հետեւեալ առաւօտն ալ, թէ գիւղի, թէ կալերու եւ թէ սարերու եւ մեծագոյն մասը տուներու մէջ։

Ահա այս թրքական բարբարոսութեան հաշւեկշիռը։

Խօ Զարեհ Մարգարեան՝ 30 ամեայ՝ գնդակահար։

Մանուկի կին Շուշան՝ 42 ամեայ՝ գնդակահար։

Ասէ Մինասեան՝ 65 ամեայ՝ գնդակահար, նոյն Ասէ Մինասեանի երկու թոռները սուրահար՝ յօշոտւած։

Վարդան Սարգէեան 28 ամեայ՝ գնդակով Տուրսուն եւ Արիֆ անուն թուրքերէ։

Երէցկնկայ Յակօն 52 ամեայ՝ գնդակով, նոյն տունէն Սարգէն 44 ամեայ։

Պասէ անուն՝ 33 ամեայ կինը՝ գնդակով, իսկ այրն բանտարկեալ է։

Պասէի երկու թոռները մէկ մանչ եւ մէկը աղջիկ Նոյեմ անուամբ՝ երկուքն ալ սուրահար արին, վերջինը վիրաւոր կրակի մէջ ձգած են։

Գնոյի կինը Մանուշակ՝ 32 ամեայ՝ գնդակով։

Խզրէի Գրօն՝ 30 ամեայ՝ գնդակով, ասոր երկու ամեայ մանկիկը սուրահար։

Եղոյի կինը Իշխան՝ 33 ամեայ՝ նախ գնդակահար եւ տակաւին ողջ՝ գլուխը կտրած եւ ջախջախած։

Նոշէ անուն 70 ամեայ պառաւ կին մը ողջ ողջ կրակն են ձգեր եւ այրեր են։

Առաքել Գորոյեան՝ 50 ամեայ՝ գնդակով։

Տ. Յարութիւն քահանայ՝ երկու աչքերուն մէջ գնդակները անցուցելով՝ սպաննւած։

Միսակ Հլոյեան՝ 18—20 ամեայ՝ սպանւած գնդակով Կիամէ-Ռուս անուն քիւրդէն։

Սէթօ Սողօթեան՝ 20 ամեայ՝ սպաննուած ոստիկան Սըլօի ձեռամբ։

Սաֆար Սարգսեան՝ 75 ամեայ՝ նոյն ոստիկանէն ըսպաննուած։

Արմենակ Պուզուղեան՝ արտին մէջ քրդազօմցի Քիւրդ Ամըքի ձեռամբ։

Սօղօ Սարգսեան՝ 50 ամեայ՝ Թլեցի փախիններէն ըսպաննուած եւ կտոր-կտոր եղած։

Կարօ Եղօեան 28 ամեայ՝ գնդակով Կեամէ Ուսոյէն։

Յակօ Սրգոյեան 30 ամեայ՝ գնդակով եւ յօշոտուած։

Խամէ Աստուածուրեան 59 ամեայ գնդակով, տոր կինը Ալմաստ՝ երբ էրկանը վրայ կը ձգէ զինքը՝ կը յօշոտեն։

Խութեցի Զաթօն 40 ամեայ՝ գնդակահար։

Գըսպօ Խչօեան՝ 28 ամեայ՝ գնդակահար, գլուխը կըտրած եւ ջախջախած...

Մաթօ Ղազարեան 41 ամեայ։

Արշակ Խաչօեան 30 ամեայ՝ գնդակահար։

Մուխսի Սայաթ 30 ամեայ գնդակահար։

Աղքատ Պօղէն 30 ամեայ՝ գնդակահար։

Տիգրան Մարգար՝ 25 ամեայ՝ վիրաւոր։

Անաշատունէն երկու փոքրիկներ 3—4 ամեայ՝ սւինով վիրաւոր։

Արմենակի հինգ ամեայ տղեկը գնդակահար։

Մարգար Բարխէեան 18 ամեայ վիրաւոր։

Շէխէյի Դաւօն 19 ամեայ՝ գնդակահար։

Սիմօյի 4 ամեայ տղան անարեկ հիւանդ։

Ըսքօ Խարզօեան 33 ամեայ՝ գնդակահար՝ Կամէյի Ուսօյի ձեռամբ։

Մհ. Շահնօ գնդակահար, Կեամէ Ուսօյի ձեռամբ։

Շահնոյի 6 ամեայ տղեկը՝ գնդակահար։

Ա. Սարգսի Վրդոյի տղան 5 ամեայ՝ գնդակահար եւ յօշոտուած։

Աստուրի Շառօն՝ 67 ամեայ՝ գնդակահար։

Աստուրի Խչօն 53 ամեայ։

Աստուրի Մանուկ՝ 44 ամեայ.

Աստուրի Հլօն 32 ամեայ։

Աստուրի Մանուկի կին՝ բերդակցին 42 ամեայ, տանը ամենքն ալ գնդակահար (ի բաց առեալ անոնք որոնց անուան առջեւ նշանակուած են իրենց սպանիչները՝ միացեալք բոլորն ալ զօրքերէն ու ոստիկաններէն սպաննուած են) Տօնէ Փուրթօյեան՝ 30 ամեայ՝ Կիամէ Ուսոյի եւ Ռզկոյի ձեռամբ գնդակահար։

Պեղէի Յակոբ՝ 49 ամեայ՝ գնդակահար։

Յոչօզի Էրօն 27 ամեայ՝ գնդակահար։

Նառոյի Կիկէն 65 ամեայ՝ խոտի վառուած դէզի մէջ ձգւած, այրւած։

Ցակօ Սաքօեան՝ 43 ամեայ՝ դաշունահար յօշոտւած նշանաւոր չարագործ Հաճի Ֆէրօյի հօրեղբօր որդի Խամօյի ձեռքով։

Ցակօ Տ. Ղազարեան 45 ամեայ գնդակահար՝ Տուրսունի եւ Արիֆի ձեռքով։

Զոլօյի Մըխէի կին Տընոէն՝ 48 ամեայ գնդակահար։

Գասպար Պօղոսեան՝ 52 ամեայ՝ գնդակահար. յիշեալ Գասպարի տղայ Մքօն՝ 21 ամեայ՝ գնդակահար եւ ապա վիրաւոր կրակ ձգւած այրւած...

Խամօյի Ցակօ՝ 5 ամեայ՝ տղեկը վիրաւոր սրով։

Մանակցի Աւերիկ՝ 27 ամեայ գնդակով։

Հլէի Մարգարի տղեկը՝ 5 ամեայ գնդակահար։

Յովէ Սաֆարին՝ 26 ամեայ՝ գնդակահար։

Գրէի Իշխանի 5 ամեայ տղեկը՝ երբ մայրը կապաննեն զինքը կը ձգէ մօր վրայ՝ սակայն ազատելու տեղ ինքն ալ կերթայ, սուինի անցուցած կրակը կը նետեն զինքը կայրեն...

Թումօ Կատօեան՝ 30 ամեայ՝ գնդակահար, ապա կրակ ձգւած այրւած։

Տըլօի Ոսմէն իբր 65 ամեայ՝ հայ պատիւը արատելու համար բռնաբարւած եւ գնդակով սպաննւած։

Խաչօի Մարգարի երկու թոռնիկները 4—6 ամեայ՝ սուինով յօշոտւած։

Արսէն Վարդանեան՝ 36 ամեայ՝ գնդակով։

Մատուր Խարէն (աջացու) գնդակահար եւ այրած։

Մուրադի կին խուխեցին՝ 54 ամեայ՝ վիրաւոր։

Տմրչատի Պէղիկ՝ 53 ամեայ՝ վիրաւոր։

Կուլէի Մօսօն՝ 46 ամեայ՝ գնդակահար։

Զաղացպան Նորէն՝ 41 ամեայ։

Խաչէի Մջօն՝ 31 ամեայ։

Կորոյի Վարդանի Մկրոն՝ 28 ամեայ։

Այգեպան Համշիկ՝ 43 ամեայ։

Խզրօյի Ղազար՝ 28 ամեայ՝ գնդակով։

Հապրոյի Յունան՝ 25 ամեայ, գնդակով։

Պէրպէր Յակոբ՝ 41 ամեայ գնդակով վիրաւոր։

Խասգեղցի Խզրէի Գրօ՝ 35 ամեայ գնդակահար։

Շողկա աղջիկ Ֆատիուռ՝ 4 ամեայ՝ գնդակահար։

Խասգեղցի Հօրէ Սաքօն՝ 20 ամեայ՝ գնդակահար։

Խասգեղցի Մաճառը՝ 24 ամեայ՝ գնդակահար։

Տիգրան Պօղօեան՝ 30 ամեայ։

Յօշոտւած, սպանւած են նաեւ Շմշակ գիւղացի 10 հայեր, որոնք գիւղի կալերուն մէջ մշակութեամբ կզբաղուէին, որոց ամբողջին անունները ծանօթ չեն գիւղացիներուն։

Բերդակցի 7 հայեր ալ սպաննուած են այն ատեն երբ կառավարութեան ոստիկանը բերած էր զանոնք եւ տարապարհիկ կաշխատցնէր՝ հեռագրական ձողերը չակելու...

Զորս մանեկցի խեղճ հայեր ալ սպաննուած են, զորոնք գիշեր ատեն սոյն յարձակող զօրքերը իրենց հետ առած էին իբր առաջնորդող, սպաննուած են նաեւ 9 հայեր ալ զանազան գիւղերէ, որոնք գործով Առլառինճ կը գտնուէին։ Ալեզոււլումցի Մհտ. Մանուկ՝ 36 ամեայ գնդակահար. 6—8 հոգի ալ գիւղի հայերէն անհետ են եւ տակաւին չգտնուեցան։

Մի խօսքով սպաննուած են մօտ 15 այր, 22 մանուկ, 13 կին եւ աղջիկ, բռնաբարուած եւ անխոստովանելի տառապանաց ենթարկւածներու թիւը ճշտել դժուարին է, աւար ու կողոպուտը բացարձակ եւ յայտնի, բոլոր տները, եկեղեցի կողոպտուած են, տաւար եւ ուտեստ թալանուած, անական կարասի եւայլն ջարդ ու փշուր եղած, աննկարագրելի խժդժութիւններն, այրած են 5—10 խոտի դէզեր, 5 տուն կայքով, 8 մարագներ լի պարէնով եւ կալերու մէջ գտնուած արմտիք, մարդու, նիւթական եւ բարոյական կորուստ անչափելի է, ինչ որ մնացեր են գիւղում, անտէր անտիրական արիւնի, վշտի եւ զարհուրելի տառապանքների մէջ խեղդւող, ցաւատանջ եւ անհարեկ կը չարչարւին, ողջ մնացող տղամարդերից շատեր չեն համարձակիր իրենց աւեր բոյները դառնալ վախնալով որ կալանաւորւին, կոտորիչներին բնաւ վնաս չի եղել, մէկ երկու հոգի վիրաւորուել են, այն ալ թերեւս իրենց գնդակներէն, անզէն եւ խեղճ գիւղացիներ ի՞նչ կրնային ընել։ Սարատը կը ծանրանայ, մանաւոր Ջարգեր ալ տեղի կունենան։ Քոփի մէջ (Սասուն) Ատօ անուն հայ մը սպանւեցաւ դարկցի Սէլիմ, Ամօ եւ Ֆելիթ անուն քիւրդերէն երբ առաջինը ոչխար կ'արածեցնէր։ Հոկտեմբեր 6-ին ժամը 9-ին զինեալ խալմիներէ սպաննուեցան քաղաքին քովիկը դալւորիկցի երկու աղքատ տղաքներ 16—18 տարեկան, դիակները դեռ գետին կը մնան։

Շարունակելու այլեւս ուժ չը կայ...

# ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

## ԿՈՎԿԱՍԵԱՆ ԽԱԲՐԻԿՆԵՐ

*(Երեսունեօթերորդ նամակ)*

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, մարտի 2

Ողբա՛մ զքեզ վրաց աշխարհ, հանուրց կովկասականաց Թշւառագոյն...

Ողբա՛մ զքեզ...

Կար ժամանակ, որ դու էիր տարւած քաղաքական

միամտութեան հովերով, սիրտ սրտի, թև թևի տուած մեծանուն փոխարքաների, գեներալների և իշխանների հետ, քո բախտն ու փառքը, քո հանգիստն ու ապագան որոնեցիր պաշտպան կօճակների տակ, փայլուն նշանազգեստների ներքև, ռուսական սրերի ծայրին...

Այդ „խորիմաստ" քաղաքականութիւնը, այնքա՜ն ծանր և հակակրելի վրաց թէև փոքրաթիւ, բայց հեռատես բողոքողներին, աւա՜ղ, երկար շատ երկար ժամանակ մնաց իբրև „աւետարան" այն պօլիտիկոսների ձեռքում, որոնց համար չը կար Կովկասեան ընդհանուր շահ, վրաց ժողովրդական մասսաների ազատագրութիւն, այլ միայն մի նպատակ—ապահով ազնւականութիւն, հարուստ կալուածատէրեր. ազգային „բանտիէների" անդորր կեանք, ի հաշիւ աշխատաւոր և քրտնաթոր դասակարգերի...

Իսկ այդ ժամանակի, հակահասարակական նպատակին քայլ առ քայլ զոհ բերուեց ամեն բան,—և ժողովրդի ինքնագիտակցութիւն, և մասսաների ինքնավարական իրաւունքը՝ խոստացուած կայսերական հրովարտակներով, և՛ եկեղեցին, և լեզուն, ազատ և ինքնուրոյն զարգացման բոլոր տարրերը: Պետերբուրգ և Թիֆլիս „բարձր" շրջաններում գտել էին գաղտնիքների գաղտնիքը—վրաց իշխանները ընդունւում էին պալատում դրկաբաց, փաղաքշանքով, ժպտուն երեսով. նրանց շօյում էին, պաշտօններ էին տալիս. փեսայանում և փեսայացնում էին. ուղարկում էին հայկական նահանգները իբր նահանգապետներ, գաւառապետներ, ժանդարմներ, իբրև ցարիզմի շահերին նւիրած պաշտօնեաների՝ ջախջախելու հայկական դաւերը, յեղափոխական շարժումները՝ „թշնամի" ազգերի շրջանում...

Քաղաքական անարգ որոգայթ էր այդ, լարւած ոճրագործ զօրաւորների ձեռքով, դաւադիր նպատակների համար: Իսկ կոյրերն միայն — կոյր քաղաքական անտեսողութեամբ—չէին կարողանում որոշել թակարդի զսպանակները և նրանց ղեկավարող „պայծառափայլ" մատները...

...Բայց ահա բռնկեց քաղաքական փոթորիկը, ցարերի մրափած երկիրը ցնցուեց յեղափոխական բոցով: Շարժման ալիքները Կենտրոնից անցան դէպի ծայրերը, հայկական նահանգների բողոքին յաջորդեց վրաց գիւղացիութեան շարժումը, որտաղ մարտական կոչը Գուրիայի խորքերից, կոչ՝ յանուն քաղաքական ազատութեան, յանուն մարդկային իրաւունքների.—և հազիւ այդ կոչը կենտրոնին հասած՝ անիւը շուռ եկաւ, տեսարանը ենթարկուեց ահուելի կերպարանափոխութեան և երէկեան բարեկամ ձեռքը, նա, որ դարևոր երդման կնիքն էր կրում, բարձրացաւ կատաղութեան ուժով և տուեց առաջին հարուածը:

Մոսկալի հարուած...

Օֆիցեր, գեներալ, լրտես, կօզակ—ամէնքն էլ շտապում էին. հետները առած թնդանօթ, զօրք, ռազմամթերք՝ վազում էին հևալով, ցասումը սրտներին, գալիք յաղթութեան պարծանքը երեսներին դրօշմած: Գնում էին դէպի Վիրական լեռները, դէպի Գուրիա, դէպի „ապստամբութեան" վայրերը՝ նորից բարձրացնելու գեսլերեան գլխարկը, նորից թարմացնելու ժողովրդական յիշողութեան մէջ անցած դարերի տիրապետութեան արհաւիրքները: Իսկ կատարուեց մեծագոյն ոճիրը, անսանձ բռնութեան գարշելի գործը:

Ահա նրա անփայլ պատկերը, գծուած թոյլ գրչով:

„Սաչխերի կողմերը կօզակները ասպատակում են տարածել ժողովրդի վրայ: Գրիչը անզօր է նկարագրել այն սարսափները որ տեղի ունեցան Շորապանիի շրջանում: Շատ գիւղեր դատարկուել են. ազգաբնակութիւնը, ահաբեկ, փախչում է դէպի սարերն և անտառները: Բուք-բորան, գետինը ձիւնով ծածկուած, կանայք՝ ծծկեր երեխաներով, տղամարդիկ՝ մեծ ու փոքր, ոտաբոբիկ, փախչում են. բայց դէպի ուր, իրանք էլ չը գիտեն: „Կօզակները գալիս են —ահա գոյժը, որ հալածական է դարձրել անբախտ ժողովուրդը: Ջիաթուրում հրդեհ, աւերմունք և նոյնիսկ կոտորած: Խաղաղարար զօրք չէ եկողը՝ այլ աւերող աւազակախումբ: Կալուաթայի մէջ կօզակները անսանձ տէր են. խուզարկութեան պատրւակով՝ վերցնում են տներից ինչ արժէք ունի, մնացածը մատնում են կրակի ու ոչնչացման:

„Քութայիսի շրջանը արեան և սուգի մէջ է: Տներ՝ հրդեհուած, բազմաթիւ շէնքեր՝ ռմբակոծուած, ժողովուրդը փախստական, խանութները փակ, բանտերը լի անմեղներով: Օրէնքի տեղ՝ սուր, արդարութեան փոխարէն՝ արիւն: Նագոմորի մէջ զօրքը կրակի մատնեց խանութները: Ամբողջ գիւղեր՝ Բախւի, Այանա, Ակէթ և Աոկան թալանուած և աւերուած են: Գուրիական սարսափները տարածում են հեռու ու հեռու: Նոյնիսկ այն տեղերում, ուր ժողովուրդը առաւել հպատակութեան յոյցեր է անում՝ բռնութիւնը շարունակում է թագաւորել: Տիրձնիսս և Լամիսղանա՝ ենթարկուեց անպատում խուզարկութեան: Ռաճայի կողմերում՝ ձերբակալուածներից մի քանիսին սպանեցին: Ձերբակալութիւնը առանձնաքի սկիզբն է միայն: Ճղուիա գիւղում կօզակները ինքնագլուխ որոշեցին սպանել կալանաւորներին: Ջիաթուրը լի է բերւող քաղաքական յանցաւորներով:

Մենգրելիան ազատ չը մնաց թալանից ու ջարդից: Սենակ, Խօպի, Բանձա և Նաօղլ թշւառութեան պատկեր են ներկայացնում: Կվիրիլին ալանթալանի ու բռնութեան գլխաւոր զոհերից է: Ալիխանովի անունը—հոմանիշ է սոսկումի: Նա սարսուռ է ազդում: Դա մի հրէշ է՝ մարդու կերպարանքով, մի խան՝ գեներալի զգեստով: Ամեն տեղ, ուր ոտք է դնում՝ տարածում է մահ, կրակ և արտասուք: Ռմբակոծութիւնը՝ սովորական է: Մեքվին, Ալպան, Օրբէլի, Լայաշ, Տօլա, Խօդիվ, Ճղնիվա և այլ գեղերի մէջ շատ տներ աւերված են ռումբերով: Զուգդիտը հեղեղուած է արիւնով: Ռաճան ենթակայ զինւորների կամայականութեան: Սամդրէդին կորած է կրակի մէջ: Անօգնական, անմեղ գիւղացիներից պահանջում են զէնք, որ չունեն, յեղափոխականներ, որոնց չեն ճանաչում, պրօկլամացիաներ, որ չեն կարդացել, և ի լրումն... առատ ապրուստ, շքեղ բնակարաններ և նոյնիսկ զւարճութեան միջոցներ... քանի-քանի կանայք և աղջիկներ մատնուեցին գազանաբարոյ զինւորականութեան անասնական կրքերին...

„Ամբողջ Վրաստանը տակն ու վրայ է եղած. ցրտից ու սովից ամեն տեղ կոտորւում է ժողովուրդը: Աքսոր ու բանտարկութիւն ամենուրեք: Բէլագօրի, Աբաշ Կվիրիլի Սենակ, Բանձա և այլ շատ գիւղեր հողի հետ են հաւասարեցրած: Քութայիս քաղաքի համարեա կէսը հրդեհւած և աւերւած է: Այնտեղ առեղծուած դրութիւնը մոռացնել է տալիս նոյնիսկ Աղա Մահմուդ խանի արշաւանքը դէպի Վրաստան"...

Դա է իրականութիւնը:

„Հայայատուկ" տեսարաններն են դրանք, բերուած Վանի ու Էրզրումի վիլայէթներից Նախիջևան, Շուշի ու Բագու և այնտեղից վերափոխուած վրաց նահանգները, „բարեկամ և կրօնակից" կառավարութեան հովանին վայելող բախտաւոր շրջանը: Որպիսի հիասթափութիւն, քաղաքական ի՜նչ հսկայական յուսախաբութիւն:

Դեռ մի քանի ամիսներ միայն առաջ, երբ գօլիցինեան քաղաքականութիւնը իր ամբողջ ամբարտաւա-

նութեամբ արիւն և կրակ էր թափում հայ ժողովրդի գլխին, արհեստականապէս գրգռած թաթար աւազակախմբերի ձեռքով, վրաց ժողովրդին անարժան ազնուականների և պօլիտիկօսների բերանից յաճախ լսեցինք անխիղճ մեղադրանքներ, ուղղած հայ յեղափոխութեան և „հայկական ձգտումների„ հասցէին. յաճախ տեսանք անտարբերութիւն այնտեղ, որտեղ բողոք էր պահանջւում, համբոյր և գրկախառնութիւն թիւրք բէգերի հետ, բողոք և սպառնալիք հայ տերրօրիստի հասցէին, որ դաշոյնը ձեռքին արդարութեան պատիժն էր տալիս ոճրագործներին... Հեռու տանջանքից՝ նրանք չը հասկացան տանջւողին. լսել չ'ուզեցին հարևան ժողովրդի կոչն ու աղերսը՝ վիշտն ու մորմոքը: Դիակների մօտով սառնասրտօրէն անցան: Ողբի դիմաց՝ ականջներ խփեցին: Աչքերը փակեցին, որ չը տեսնեն սուգն ու շիվան, աւերածն ու թալանը... Կոյր միամտութեամբ այդ բոլորը բացատրեց „հայկական ձգտումներով“, հռչակաւոր „սեպարատիզմով“—յաւիտենական մեկնաբանութիւնը բռնապետական ոճիրների...

„Վրացիական սարսափները“ մի նոր հերքումն է քաղաքական այդ խակ մտածողութեան: Վրացիները չ'ունէին „սեպարատիզմ“. չ'ունեն „թիւրքահայկական“ խնդիր՝ „մշտական հնոցը“ անջատական ձգտումների“. չունեն „ազգային, անկախ եկեղեցի“. Վրաստանում երբեք չէ գործել „անգլիական մատը“. գոյութիւն չ'ունի „Մեծ Հայաստան“ ստեղծելու ծրագիրը.—բայց և այնպէս, նա էլ՝ մի ծայրից մինչև միւսը, առանց դասակարգի խտրութեան, ենթարկւեց ցարական աւերիչ փոթորկին, զոհ գնաց ղ ա ղ ա խ ա յ ի ն ոճրագործութեան, և այսօր, նրա դժբախտ զաւակները, նստած մխող աւերակների վրայ, ողբում են իրանց կեանքը, գոյքը, իրանց դիւրահաւանութեան այսքա՜ն դժբախտ արդիւնքը. Եւ այդ բոլորը միայն և միայն այն պատճառով, որ արձագանք տուին ազատագրական հանուր կոչին, կամեցան ապրել իբրև մարդ, և ոչ իբրև անասուն, գերի՝ մի օր չինօվնիկին, միւս օրը ազնուականին, մի տեղ ոստիկանի մտրակին, մի այլ տեղ կապիտալիստի քմահաճոյքին...

Դուադի՜ր, կեղծաւոր կառավարութիւն, ստորամի՜տ գեներալների անարգ բանակ, անընդունակ յարգելու նոյն իսկ իրենց ցարերի հրովարտակները ուղղած „մեր սիրելի վրաց ազգին“ ու „թանգակին վրաց ազնուականութեան“... Ստոր „մեծամեծների“ մի ամբողջ վոհմակ, որ չը բաւականացաւ խաչ հանելով մարտիրոս—յեղափոխականների դեռ ևս անկազմ, անփորձ և փոքրաթիւ խմբերը, և սուր ու կրակի մատնեց „սիրեցեալ վրաց ժողովրդի“ սգաւոր վաթանը, երբեմն ողողած այն արիւնով, որ այսօրւայ խ ա բ ւ ա ծ ժողովուրդը թափեց ի պաշտպանութիւն ռուսական Արծիւի, ընդդէմ պարսկական գրոհի...

Սակայն դահիճը չը բաւականացաւ արիւնով. աւերակները նրան չը կշտացրին, և ոչ էլ համազգային սուգը նրա լսելիքը գոհացրեց: Նա վճռեց մինչև ծայր քամել տալ դառնութեան բաժակը, և ոտնակոխ անել սգաւոր ժողովրդի պատիւն ու անունը, նրա ինքնասիրութեան վերջին նշոյլը: Եւ ահա գիւղեր ու քաղաքներ ընկած, ցարի սպասաւորները—գեներալ, օֆիցեր, կօզակ, սոլդաթ—աղերսագրեր էին հաւաքում, „աղ ու հաց“ պահանջում, շօշափելի փաստեր անկեղծ հպատակութեան, ապացոյցներ անկեղծ զղջման: Եւ որքան կրկնապատկւում էին տանջանքի սպառնալիքները, որքան աւելի էին շաչում միահեծան մտրակները, այնքան էլ առատանում էին „աղ ու հաց“ ներկայացնող պատգամաւորները, այնքան էլ բազմանում էին այն հանրագրերը, որոնցով տանջւողները՝ գոհութիւն էին յայտնում տանջողներին, մորթւողները իրանց մորթողներին... Սուլթանական հանրագրեր, որոնք Ալիխանովի ձեռքով ու շնշտով առաքւում են Թիֆլիս, այնտեղից Պետերբուրգ՝ „առ ոտս գահոյից“, ի նշան վերջնական խաղաղացման...

Ահա մինը այդ ուղերձներից:

Պ ն դ ա պ ե տ Կ ր ի լ օ վ ի ն

Մենք Օզուրգեթի քաղաքի պատգամաւորներս՝ խընդրում ենք ընդունել ներկայ ուղերձը, որպէս արտայայտիչ մեր ընդհանուր շնորհակալութեան դէպի ձեզ՝ այն նոր կարգերի համար, որ ձեր շնորհիւ այժմ մենք տեսնում ենք Օզուրգեթում: Շատ մօտ անցեալում, մենք բոլորս ճնշւած ու անպաշտպան էինք, չէինք կարողանում ձայն հանել իսկ այժմ կատարելապէս վստահելով ձեր անկեղծ ու ճշմարիտ պաշտպանութեան վրայ, համարձակութիւն ենք առնում նորից ու նորից մեր հաւատարիմ հպատակութիւնը յայտնելու Ռուսաց Գահին, որից մենք երբեք հեռացած չենք եղել: Երէկւայ օրը միշտ անջնջելի պէտք է մնայ մեր սրտերում. երէկ մենք նորից զգացինք մեզ Ռուսաստանի գրկում և կարծես արժանացանք Ռուսաց զօրեղ և ճշմարիտ օրէնքների տակ մտնելու: Այդ զգացումը ստիպեց մեզ այսօր գալ ձեզ մօտ, իբրև մի մարդու, որը պատճառ դարձաւ մեր այս ուրախութեանը, և բերեց մեզ նոր կեանք և խաղաղութիւն“: 2000 ստորագրութիւններ.

Ապաբախտ, թշւառ ժողովուրդ:

Ողբի և սուգի ժողովուրդ, որ հարկադրւած ես՝ համբուրել քեզ հարւածող արիւնլւայ ձեռքը, լիզել այն գարշելի թաթերը, որոնք յօշոտում են զաւակներիդ, ժպտալ մարդ-գազանների երեսներին, որոնք քո գերեզմանն են փորում...

Է. ԱԿՆՈՒՆԻ

# ԹԵՐԹՕՆ

## ՎԻԴՕՇԻ ԲԱՋԷՆ

(Հատուածներ նոյնանուն պօէմից)

—

*Նւէր ՔՐԻՍՏԱՓՈՐԻ և ԷԴՈՒԱՐԴԻ յիշատակին.*
*մահւան տարեդարձի առիթով:*

I

Դարերից ի վեր սև՛ սուգ է պատել,
Սև՛ սուգ է պատել հայրենի երկրին,
Եւ հազարգըլխեան վիշապի նման
Չօքել է հողի ցաւատանջ սըրտին
Ու կատաղօրէն արիւնն է ծըծում...
Եւ այն վայրերում վա՛ղ ժամանակից
Լըռել են թըռչունք, ծաղկունք չեն ծաղկում,
Ո՛րբ հովիտներում, մոխի՛ր դաշտերում
Փըշերի վերան հողմերն են վայում...
Եւ կականն ու լաց յուսահատ Հային
Սահմանից սահման հընչելով անդուլ,
Անվերջ բողոք են անում երկընքին,
Իսկ նա շիրմի պէս լուռ է և ամուլ...
Գիշերը լի է ահ ու սարսափով.

Ոճիրն անպատիժ իր հունձքն է անում,
Պայծառ արևն էլ կո՞յր այրիի պէս
Խաւարա՛ծ անցնում հայոց երկընքով...
Իսկ ժայռուտ լեռներն. անմռունչ վըկայ
Մեր անցեալ փառքին, ինչպէս շղթայուած
Հըսկաների մի կուռ բանակ անշէն
Նայում են անզօր՝ Մայր-հողով անցնող
Բարբարոսութեան ահռելի վազքին,
Եւ չը տեսնելու համար մըշտական
Մըշուշով իրանց աչքերն են ծածկում...

II

Անթիւ են հայի տըւած հերոսներ,
Ամեն մի աւան իր Առիւծն ունի
Հայ ֆէդայիի գընդակն անվըրէպ
Առած է դարձել քըրդերի միջին.
Նոցա գործերը դեռ մինչև այսօր
Ապրում են նոյնիսկ թըշնամու սըրտում.
Եւ մայրերն իրանց երեխաներին
Օրօր երգելիս գովում են անվերջ
Ղէնըկցի Գըրգօն, Ագամն ու Սըրպօն,
Գըրգօի հարսը Շաքէն գահավէժ,
Եւ որի համար խորին հաւատքով
Ասում են ճերմակ մի արծիւ դարձած
Անտօքի վրայ ձագն է խընամում,
Որը մեծանալիս տէր է դառնալու
Քըրդերի բըռնած տափաստաններին...
Քըրդուհին լերանց հովասուն լանջում
Գառն արածելիս կամ ջուր կըրելիս
Իր երգերի մէջ հայդուկն է գովում
Նորա գանգրահեր գըլուխը սիրուն,
Որ փառքի բընով հանգչում է սարում:
Իսկ ցեղապետներն իրար մօտ գալիս
Երբ յիշում են քաջ Գումանն ու Վարդան
Եւ նոցա մըղած մարտն ու արշաւանք,
Միշտ ափսոսում են այն վառ տըղերանց,
Որ գընդակների տարափին ներքև
Անխախտ ժայռերի նըման կըռուելով
Մինչ վերջին փամփուշտ, երգելով ընկան...
Իսկ տաճիկ զօրքը դեռ մինչև այսօր
Սարսափ տարածող Սերոբից յետոյ
Քաջ Անդրանիկի ըստուերն է տեսնում
Սասնոյ ամեն մի ժայռի կատարում:

III

„Ողջոյն ձեզ տանջուած քոյրեր, եղբայրներ
Որ խո՛ր սուգի մէջ մահն էք հոտոտում
Այնքան ահռելի զըրկանքից յետոյ
Էլ չէք ցանկանում ապրել աշխարհում:
Ձեր տունը աւեր. ձեր սիրտը աւեր,
Գերեզմանների վրայ էք քայլում,
Արցունք էք ուզում ձեր վիշտը լալու
Սարսափից սակայն այդ էլ է ցամքել...
Ձեր ցաւով այրուած, ձեր վըշտով խամրած
Քաջասիրտ տըղերք դուրս եկան կըռւի,
Ձեր կեանքը կըրծող վիշապը սուգին
Վառօդի այրւող ծըխում խեղդելու:
Ոսկէ օրերում, փառքի օրերում
Առա՛նց երկիւղի և անդաւաճան
Նոքա կուրծք տըւին քըրդին ու զօրքին
Ընկան դիմագրաւ, ձեր սուգը սակայն
Նոցա սըբաղան դիակաց վերան
Ու յաղթանակի թափօրը կազմեց...
Բայց միթէ՞ պիտի կընանք հանդուրժել
Այնքան զըրկանքին ու տառապանքին,
Միթէ՞ յաւիտեան դահիճ արքային
Դուք պիտի մնաք ըստրուկ ու գերի:
Է՛լ բաւ է ինչքան ձեր մէջ հեկեկաց
Անպաշտպան այրին իր լացովն անվերջ,
Տըղամարդն է որ սորանից յետոյ
Յաջորդելու է լացող այրիին:
Նա խօսելու է անլա՛ց ու հըպարտ
Կըռւից, պայքարից, վըրէժից արդար,
Պահանջելու է նա բըռնակալից
Հաշիւը անթիւ իր ոճիրների:

—

Լեռներ, կուռ լեռներ, օրինակ տըւէք
Ըստրուկ կեանքի մէջ թուլացած հային,
Թէ ինչպէս դարեր դուք լանջ էք տըւել
Փոթորիկներին, շանթերին ահեղ,
Եւ սակայն դարձեալ ամպերի միջում
Անխախտ ու կանգուն ապրում էք ազատ:
Թող ձեր հաւքերը սիրտ տան խեղճ հային
Ժայռերն ամրացնեն թոյլի բազուկներ,
Եւ ձեր անփոփոխ դիրքն յաւերժական
Հայը մայր-հողին յաւիտեան կապեն:
Եւ դուք մայրենի գետեր գըլխրառուշ,
Որ այնքան արիւն-արցունք կուլ տըւիք,
Ձեր պըղտոր ալիքն ու ցասկոտ յորձանք
Թող հային ռազմի քայլերգեր հընչեն:
Հեռո՛ւ ձեզանից կըսկիծն ու հառաչ
Սուրբ կատաղութեամբ ըսպառազինուած
„Վրէժ" գոռացէք ձեր որբ ափերում
Դեռ լուռ ծըխացող աւերակներին...
Հովասո՛ւն դաշտեր, մարմանդ արօտներ,
Եդեմ երբեմնի, ա՛խ այժըմ խոպան,
Ինչպէս ծիծառներ հայի նոր-գարնան,
Ձեր հովերն այցի ղըրկեցէք թըշւառ
Խըրճիթների մէջ ողբակոծ հային.
Թող պատմեն նորա կարմի՛ր երազում
Թէ անվախճան չէ՛ տառապանքն հայի.
Թէ պայծառ օրեր. թէ ալ վարդ օրեր
Պիտի ողջունեն հողը հայրենի,
Թէ ազատութեան մօրենիի պէս
Հայոց լեռներում պիտի բըռնկի
Անշէջ արշալոյսն հայի նոր-կեանքի.
Եւ սուրբ վըրէժի յագուրդից յետոյ
Խաղաղութիւնը պիտի տարածէ
Արդար վաստակի ծիրանին ոսկի
Ցորենի յուռթի դաշտերի վերան:

—

Իսկ դուք հայրենի սօսեաց անտառներ,
Դուք ինձ չէք տեսնիլ էլ աքսորական
Ապաստան գըտած ձեր պուրակներում.
Է՛լ չէք լսելու վըշտի ժամերում
Իմ խո՛ր հառաչանքն ու լացն անարցունք:
Թողնում եմ ընդմիշտ տուն ու հայրենիք,
Հայի դարևոր ցաւից ու սուգից

Հանդիստս ու քունըս խլած կորցըրած
Գընում եմ փընտրել ոճրագործ արքան
Հայի արիւնով դեռ չը կշտացած
Կախաղան ելած հերոս հայորդին,
Անշիրիմ թաղուած ֆեդայիք անթիւ,
Թըշնամուց սեւ հաց մուրացող այրին,
Գերուած աղջըկունք, անարգուած հարսներ,
Անլեզու որբը վաճառքի հանուած,—
Վըրէժ են խընդրում, վըրէժ աղերսում...
Միշտ կուրծք պիտի տալ, պիտի մաքառել
Քանի արիւն կայ մեր երակներում,
Քանի բազուկը կարող է շարժել
Ուժը պիտի նետել թըշնամու ճակտին.
Թէ զէնքը խըլեն, փայտով ու քարով
Պիտի մաքառել, թէ այդ էլ խըլեն
Բռունցքով պիտի զարնել թըշնամուն,
Իսկ թէ բազուկն էլ կըտրէ թըշնամին
Ցուլի պէս գըլխով պիտի պաշտպանել..
Թէ վիճակուած է ամբողջ հայ ազգին
Բնաջինջ լինել հայրենի երկրում,
Թո՛ղ գոնէ մեռնենք մինչեւ վերջին մարդ
Անխիղճ թըշնամուն դիմադըրելով.
Որպէսզի տըրտում սեւ բուէրի տեղ
Հայ ազգի մահը արծուիքը ողբան.
Եւ արեւապատ անապատներում
Առիւծն ու վագրը ժայռերի ծերպից
Առնական ազգի թաղումը սըգան...
Դե՛հ, մնաք բարեւ, թող այսուհետեւ
Ամէ՛ն հայ մահուան գագաթից քայլէ,
Մինչեւ որ ծագէ մեր երկրին արեւ
Եւ հայ արեան մէջ ծիածան կապէ“:

—

Այսպէս վերջացրեց իր երգը բաղէն
Եւ նայւածքը շեշտ, մարգարէական
Նետեց սարերին հայոց ձիւնապատ
Ու խո՛ր հառաչեց ներկան յիշելով.
Քաղաքներն աւեր, գիւղերն անբընակ
Դաշտերի ծաղկունք արեամբ բորբոսած
Երգ ու պարի տեղ սահմանից սահման
Հալածւող հայի հեծկլտանքի հետ
Լըսւում է դահճի բըրքիջն անվախճան...

ՎՏԱՐԱՆԴԻ

# ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

## ՍՏԵՓԱՆ ՍՏԵՓԱՆԵԱՆ

Ծնւել 1878 թւին, Գանձակի Նորաշէն արւարձանում: Սկզբնական ուսումը ստացել տեղական երկդասեան ուսումնարանում, միջնակարգը Ներսիսեան դպրոցում:

17 տար. պատանի էր Ստեփանեան, երբ Սասունի բարձունքներում կատարւում էր մարդկային տանջանքների մեծ ողբերգը, երբ հայի արիւնը գնում էր քարացած ու անխիղճ աշխարհին մեր ժողովրդի ցաւագին երկունքը հաղորդելու: Նա մէկն էր այն սակաւաթիւ հոգիներից, որոնց հանգիստը առմիշտ փոթորկեց այդ հզօր եղերերգութեան ձայն. մէկը այն նուրբ ականջներից, որոնք ո՛ւր էլ լինեն և ուր էլ ապրեն՝ յաւիտեան լսում են վիրաւոր արծուի հեկեկանքը այնպիսի զօրեղ շեշտերով, որպէսզի երբ եւիցէ կամ որեւէ տեղ չը կարողանան դադար առնել...

Աղջակեզ ժողովրդի այդ հեծեծանքները դառնապէս հալածում էին նրան. ու ամէն ինչ մոռացած՝ շարունակ պտըտում էր նա Թիֆլիսի խուլ ու անմարդաբնակ անկիւնները գաղտնի գործին մասնակցելու, և՛ պատրաստւելու և՛ պատրաստելու: Անմոռանալի են նրա ազդու և յափշտակիչ դասախօսութիւնները, որ նա ունենում էր յաճախակի, համարեայ ամէն գիշեր, Թիֆլիսի հեռաւոր թաղերում՝ արհեստաւորների, մշակների, գործաւորների ու համալների զանազան խմբերի հետ.—Նա միշտ դրանց մէջն էր, դրանց հետ, դրանց սիրելին... Այսպիսի պայմաններում նրա մէջ մշակւեց մի խիստ հասարակական սիրտ, ձեւակերպւեց մի անպայման մաքուր հոգի ու վառ ստածութիւն:

1898 թւականին, 20 տարեկան հասակում, Ստեփանեան աւարտեց Ներսիսեան դպրոցը և անմիջապէս կեանքի մտաւ: Մի ամբողջ տարի առաւօտից երեկոյ՝ առանց յոգնելու և առանց դադար առնելու, շարունակում էր միեւնոյն կեանքը մերթ Գանձակի գաւառում, մերթ Բալախանիի գործարաններում: Ամէն տեղ նոյն աշխատանքը, նոյն պայքարը, նոյն կռիւը շրջապատող բացասական ոյժերի դէմ: Կրակոտ շունչով նաւթային աշխարհի մթնոլորտում նա համամարդկային ամենալայն իդէալներ էր տարածում, շեշտում այն անարդ շահագործումը, որին ենթարկւած է բանւորը առանց ազգի և կրօնի խտրութեան՝ կապիտալիզմի և կառավարական սպանող ռեժիմի պատճառով... Հետեւեալ տարւայ աշնան՝ Ստեփանեան յայտնւեց Դաղստանի մայրաքաղաք Թէմուր-Խան-Շուրայում՝ իբրև զինւոր: Այս միջավայրը ամենեւին վհատութիւն չը պատճառեց կեանքի արկածաւոր բազմազանութիւնը սիրող երիտասարդին: Հռչակաւոր Շամիլի անւանի երկրում նա վերջնականապէս կազմակերպւեց իբրև կուսակցի ռազմիկ: Նրա բնաւորութեան յատկանշական կողմերը՝ անվախութիւնն ու յանդգնութիւնը այդտեղ նրբացան և նախանձելի զարգացման հասան: Երեք տարւայ զինւորական կեանքից յետոյ—մի կեանք, ուր նա այնքան աշակերտներ էր ունեցել—Ստեփանեան վերադարձաւ նորից իր հայրենի Գանձակ քաղաքը: Եւ նա մէկն եղաւ այն համակրելի բնաւորութիւններից, որոնցով խանդավառւեց իր հայրենի քաղաքի անպատւաբեր ձեռնպահութիւնը և որոնցով բորբոքւեց Գանձակի զարթնումը: Այդ զարթնումի մէջ նա բաւական նշանաւոր դեր խաղաց:

Շուտով վրայ հասան 1903-ի յունիսեան չարաբաստիկ օրերը: Պէտք էր մի զօրեղ դիմադրութեամբ յետ մղել այն ամօթալի հրամանը, որը գալիս էր Պետերբուրգի ոճրագործ ապարանքներից: Հարկաւոր էր ժողովրդական մի ուժգին բողոքով դրօշ տալ մեր նոր թշնամու՝ արդէն չափն ու սահմանն անցած արարքներին: Ու կազմակերպւեց ամբոխի, վիրաւորւած, յուզւած ամբոխի կատաղի հոսանքը: Գանձակի լայն փողոցներում այլեւս ուրիշ ոչինչ չէր երեւում, բայց եթէ տեղահան եղած հասարակութեան ամէհի վազքը: Գնում էին անարդարութիւնը հարւածելու, գնում էին վայրենի հրամանը դէն շպրտելու: Ու Ստեփանեան նրանց առջեւումն էր:

Կարճ ժամանակում ռուսական բարբարոս զօրքի հրացանաձգութիւնը վերջ դրեց ամէն բանի. անմեղների արիւնը ցայտեց. Ստեփանեան՝ շատերի հետ միասին՝ կալանաւորւեց ու շղթայակապ նետւեց բանտի խոնաւ նկուղները: Մարդկային այդ անպատիւ սպանդանոցում, ուր շատ անգամ մեռնում են հոգու վսեմ թռիչքները՝ Ստեփանեան ոչինչ չ՚կորցրեց: Փակ պատերում անգամ նա ամէն կերպ պաշտպանում էր իր ընկերներին ու տառապանքի զոհերին: Քանի-քանի անգամ կատաղի բռունցքներով դղրդեցրել է բանտի հաստ ու կուռ դռները, բողոքել անիրաւութեան դէմ և իր խցից մէկ կամ միւս բանտարկեալ ընկերոջ համար այս կամ այն բանը պահանջել:

Բանտից յետոյ՝ Ստեփանեան անմիջապէս վերսկսեց իր գործունէութիւնը: Դաշնակցութեան դրօշի տակ ճանապարհւեց դէպի Շուշու և Զանգեզուրի գաւառները՝ կազմակերպելու և յեղափոխական շունչ հաղորդելու տեղական ազգաբնակութեան: Այդ ասպարիզում նա ուղղակի փոթորիկ էր

ու մրրիկ։ Կայծակի արագութեամբ նա տասնեակ գիւղեր բերում, կանգնեցնում էր կարմիր դաղափարի առջև։ Ուր ոտք էր դնում—ժողովուրդը նրա հետ էր ու գործի գերին։

Այնուհետև սկսեց այն պատմական, վիթխարի աղէտքը, որին մի տարուց աւելի ենթարկուած է ամբողջ Կովկասը։ Իսկ կառավարութեան բացարձակ դաւադրութիւնը, մահմեդական խմբերի ամարդի ու ապուշ յարձակումները մի բոպէ շշմեցրին Ստեփանեանին։ Սակայն նա շուտ ըմբռնեց իրերի իմաստը և սկսեց մի կողմից մահմեդականներին հասկացնել կառավարական՝ անպատիւ խաղը, միւս կողմից հայկական գաւառները պատրաստել, կազմակերպել և վտանգի վայրկեանին յաղթականօրէն կանգնեցնել հակա-յեղափոխութեան պղտոր հոսանքի դէմ։ Սակայն մեր հարևանի քաղաքական արհատութիւնը կատարեալ եղաւ։ Նա չ'ուզեց, չ կարողացաւ հասկանալ միապետութեան լարած որոգայթի այն աղէտաւոր հետևանքը, որ պիտի ծանրանար երկու ժողովրդի վրայ էլ՝ հաւասարապէս։ Եւ ամէն անկիւնից, ամէն ոլորից սկսեց իր անպատիւ, անմաքուր գործը,—այրնեց, ջարդեց, հրդեհեց միշտ դաղտագողի, միշտ ծածուկ, միշտ խաբէական միջոցներով, երդումների ժամանակ կամ երդումներից անմիջապէս յետոյ... Ստեփանեան չ կարողացաւ հանդուրժել այդքան ամարդութեան. փոթորկւեց, վրէժը ծառացաւ սրտում և անպատմելի ափսոսանքով ու խորունկ թախծութեամբ սկսեց պատժի ու հատուցումի դուր ը Մահը տարածեց թուրք գիւղերի վրայ. տները արևամներկւեցին և այգիները բուերի ապաստարաններ դարձան...

Յակա-յեղափոխութեան դէմ վարած այս անընդհատ պայքարի մէջ, զինակից ընկերների հետ միասին՝ ընկաւ Ստեփանեան, 27 տարեկան։ Տխուր եղերական վախճան...

Սիւնեաց աշխարհի արցունքոտ անկիւններից մէկում այսօր հանգչում է ընդմիշտ այն բեղմնաւոր կեանքը, որ երազում էր պայքարել ռուսական բռնութեան դէմ՝ կովկասեան երկրի բովանդակ ազատութեան համար...

Յարգա՜նք նրա անւան, նրա գործին, նրա շիրիմին։

---

## ՎՌԱՄՇԱՊՈՒՀ ՔԷՆՏԻՐԵԱՆ
## (ԷԴՈՒԱՐԴ)

(Զոհւած Բոլղարիա, 1905 մարտի 17-ին)։




Մի տարի առաջ էր, որ զոհ գնաց ռմբափորձին, յեղափոխական մարտիկի օրինակելի անձնւիրութեամբ։ Նրա ողբերգական մահւան տարեդարձն է այսօր։ Լի յարգանքով մեր վաղամեռն ընկերոջ յիշատակը, զետեղում ենք „Դրօշակի“ ներկայ համարում նրա պատկերը—սիրոյ և փառաբանքի արժանի այդ դէմքը։ Եւ խորին ցաւով ստիպուած ենք գալիք օրերին յետաձգել մեր խօսքը այս մասին, կենսագրական այն համակրական տեսութիւնը, որին արժանի է քիչ ծանօթ, բայց շատ խօսուն այդ վաղաթառամ կեանքը...

---

# ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՏԸ

## ԼԱՀԷԻ ԺՈՂՈՎԸ ԵՒ ԹԻՒՐՔԱՀԱՅ ԽՆԴԻՐԸ

Եւրոպական զանազան երկրների ականաւոր գործիչների կողմից նախագահ Ռօզվելտին եղած դիմումը՝ պաշտօնապէս յարուցանել թիւրքահայերի խնդիրը Լահէի ժողովում՝ բուռն արձագանք գտաւ հայ գաղութների և համալսարանական հայ երիտասարդութեան շրջաններում։ Կազմակերպուեցին ժողովներ և շարունակւում են կազմել՝ շեշտելու յարուցած խնդրի կարևորութիւնն ու այժմէութիւնը։ Առաջ ենք բերում, իբրև փաստաթղթեր, ուղարկուած հեռագիրները։

Փետրուարի 17-ին, Ժընևի հայկական ժողովի կողմից Միացեալ-Նահանգների նախագահ Ռօզվելտին ուղարկւեց հետևեալ հեռագիրը։

Պարոն Նախագահ,

„Հելվէտեան հանրապետութեան այս անւանի քաղաքում ապրող հայ ուսանողութիւնը և հայ գաղութը, յատուկ միտինգ գումարած, ջերմ հաւատքով միացնում է իր ձայնը Եւրոպայի հայասէրների դիմումին՝ մեծայոյս, որ դուք, հեղինակաւոր պաշտպան ճնշւած ժողովուրդների, չէք խնայի ոչ մէկ ջանք Լահէի խորհրդաժողովին ներկայացնելու և պաշտպան կանգնելու թիւրքահայերի՝ միջազգային դաշնագրով սրբագործուած դատին։ Մենք խօսում ենք կր տանք մեզ, յանուն քաղաքակրթութեան և մարդկային իրաւունքի՝ դիմել նոր աշխարհի մեծ հանրապետութեան և իր վեհանձն նախագահին՝ մանաւանդ որ Միացեալ Նահանգները աւելի քան կէս դարի մասոր և բարոյական արգասաւոր աշխատանք են թափել Հայաստանի հողին վրայ, որի անբախտ և անպաշտպան ժողովուրդը իր ամբողջ քաղաքակրթութեամբ և ազնիւ իղձերով՝ բարբարոսութեան հարուածների տակ անողոքօրէն խողխողւելու վտանգին է ենթարկւած։ Պարոն Նախագահ, ձեր անշահախնդիր ջանքերով պաշտպանուած միջազգային ազդու և իրական միջամտութիւնը միայն կարող է վերջ դնել այն ահռելի և արիւնալից դրութեանը, որ անընդհատ սրտում կը մնայ մարդկային պատմութեան մէջ և այն անտանելի սև ժամին, որը խորտակելու համար մարտիրոսացած հայ ժողովուրդը՝ յեղափոխական դրօշի տակ, տարիներից իվեր, Փոքր-Ասիայի խաւարի մէջ հերոսական ու ողբերգական պայքար է մղում՝ ազատութեան և քաղաքակրթութեան յաղթանակին համար“։

Լօզանից.

„Լօզանի հայ ուսանողութիւնը և գաղութը խորապէս ձայնակցելով ձեզ հասած կոչերուն կը խնդրեն որ ձեր մարդասէր և հեղինակաւոր ձայնը բարձրացնէք Հայաստանին համար, որպէսզի վերջապէս յե՛տ քաշւին թիւրքին արիւնոտ ձեռքերը, բովանդակ ազգ մը սիստեմատիկաբար կոտորելու ազատութենէն“։

Ռուսչուկ քաղաքից.

„Միթինկի մը մէջ հաւաքուած 3000 հայերը խորապէս յուզուած են այն դիմումէն՝ զոր Ֆրանսայի, Անգլիոյ և միւս քաղաքակիրթ երկիրներու մարդկութեան պաշտպանները ուղղած են Ձեր վեհանձն համակրութեան՝ ի նպաստ արիւնաշաղախ Հայաստանի հարցին։ Ձեր պաշտպանութեան տակ առնելով՝ խաղաղ, աշխատասէր և քաղաքակրթութեան կապուած ազգ մը՝ որուն

կը զլանան իր բնակիչները մինչև իսկ գոյութեան ամենատարրական իրաւունքները՝ Դուք ամենափայլուն մարդկօգուտ գործով մը պսակած պիտի ըլլաք քաղաքակրթութեան վրայ Ձեր բարիքներուն շարքը, և այնքան փառաւոր կերպով նախագահած Ձեր մեծ ազգը պիտի լիացնէք յաւիտենական երախտագիտութեամբը մարտիրոսներու՝ որոնք կեանքի կոչած պիտի ըլլաք":

Սօֆիայից.

„Սօֆիայի 3000 հայերը, մեծ մասով տարագիր, միտինգ կազմելով՝ իրենց երախտագիտական զգացումները կը յայտնեն՝ հարստահարուած հայ ժողովուրդին նկատմամբ ունեցած ձեր վեհանձն համակրութեան համար, և համոզուած են թէ՝ հայկական արիւնոտ խնդիրը Լոնտէի մօտակայ ժողովին ներկայացնելով ներկայ ժամանակի ամենէ մարդկօգուտ գործերէն մէկը գլուխ հանած պիտի ըլլաք":

Փիլիպէից.

„Փիլիպէի հայ գաղութը, թւով 2000, այսօր ի ժողով գումարուած և զգացուած ձեր բարեացակամ ստանձնողութենէն, որ միշտ կը տածէք հարստահարուածներու վիճակի մասին, ձեզ կը ներկայացնէ իր խորին ողջանշացման հաւատիքը ու կը խնդրէ ձեր ազդու միջամտութիւնը՝ ի նպաստ հայ ազգին, որ միշտ հարստահարուած է քրիստոնէութեան անուան և դէպի քաղաքակրթութիւն ունեցած հակումին համար, որ ներկայիս՝ դարաւոր մարտիրոսութիւն եղող իր գոյութեան պատմութեան մէջ նմանը չունեցող եղերական շրջան մը կանցնէ։ Ձեր ազնիւ նախաձեռնութիւնը՝ ձեր բարձր հեղինակութեան շնորհիւ անգամ մը ևս պիտի սփոփէ տառապող մարդկութեան ցաւերը և դարերու ընթացքին մէջ մարդկային պատմութեան խղճին առաջ պիտի յաւերժացնէ ձեր մեծ խաղաղարարի համբաւաւոր անունը":

Պուքրէշտից.

„Հայոց նկատմամբ ձեր ցոյց տուած մարդասիրական զգացումներուն համար երախտապարտ է ձեզի Պուքրէշտի հայութիւնը 500 հոգւոյ բաղկացած. և կուգայ խնդրել ձեզնէ, որ բարեհաճիք Լոհէյի յառաջիկայ ժողովին ներկայացնել հայկական հարցը, որով ճգնաժամէ փրկած պիտի ըլլաք ամբողջ ազգ մը, և քաղաքակրթութեան պատմութեան մէջ աւելցուցած՝ նոր ու փառաւոր էջ մը:

Պուրկազից.

„Պուրկազի հայերը՝ մեծամասնութեամբ տարագիրներ, միտինկ մը կազմելով կը խնդրեն ձեզմէ որ նախաձեռնութիւնն առնէք եւրոպական պետութիւններուն յիշեցնելու իրենց պարտականութիւնը հայերուն նկատմամբ և յարմարագոյն եղանակով գործնականացնելու այն իրաւունքները՝ որոնց համար այնքան անմեղ արիւն հոսեցաւ և որոնց երաշխաւոր եղած է Եւրոպան հանդիսաւորապէս":

Պրայլայից.

„Պրայլայի հայ գաղթականութիւնը սրտանց երախտապարտ՝ մարտիրոս ժողովուրդի մը նկատմամբ ձեր ցոյց տուած բարձր հոգածութեանը համար՝ ձեզմէ կը խնդրէ որ բարեհաճիք նախաձեռնութիւնն ունենալ բարելաւելու հայերուն վիճակը, հայկական խնդիրը ներկայացնելով Լոհէյի ժողովին: Մեծ հանրապետութիւնը՝ արդէն փառաւոր ազատութեան և յառաջդիմութեան իր աւանդութիւններովը, և որուն կը նախագահէք այնքան արժանաւորապէս՝ մարդկօգուտ ամենագեղեցիկ յաղթանակը տարած պիտի ըլլայ անոր, նոր և ամենապայծառ էջ մը աւելցնելով քաղաքակրթութեան պատմութեան մէջ, որուն յառաջապահն է հայ ժողովուրդը Արևելքի մէջ":

Եգիպտոսից.

„Աղեքսանդրիոյ հայերը ի միթինկ գումարուած, միաձայնութեամբ կ'որոշեն խառնել իրենց ձայնը եւրոպացի հայասէրներու ձայնին, խնդրելու համար ձեր ազդու միջամտութիւնը՝ Թիւրքիոյ փտթար վարչութեան տակ հեծող հայերուն ահռելի վիճակին բարուօքման համար":

Գահիրէից:

Գահիրէի հայերը միտինգ մը գումարելով ձեզ կը մատուցանեն իրենց խորին երախտագիտութիւնը փոխարէն այն համակրանաց զոր շատ անգամներ ցոյց տուած էք հայոց դժնդակ վիճակի բարելաւմանը նպաստելու համար: Ձեր մարդասիրական զգացմանց վստահ՝ կը թախանձեն ձեր ազդու միջամտութիւնը այն միջոցներով, որ դուք յարմար կը դատեք, վերջ մը տալու համար բարբարոսական վարչութեան ներքև շարունակուած մեր անտանելի կացութեան:

---

## ԼՈՆԴՈՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ

„Արևելեան հարցի միջազգային միութեան" կողմէն հրաւիրուած ժողովը տեղի ունեցաւ Լօնդօն, փետրուար 23-ին. նախագահութեամբ մեր հարցի ջերմ համակրող Տ'Էստուրնել դը Կօնստանի, անդամ Ֆրանսայի սենատի։ Իտալիոյ կողմէն եկած էր Լիւճի Վիլլիարի։ Ֆրանսաէն „Պրօ Արմէնիայի" խմբագիր Պիեր Քիար, և Ժան Լօնգէ։ Ներկաներուն մէջ կը գտնուէին ի միջի այլոց հետևեալ անձերը, Ս. Ստէվէնսըն, Մ. Նօէլ Բըքսըն, Դոկտոր Ռէյնօլդս, Դոկտոր Ֆէյրբէրն, Սաութվօրկի եպիսկոպոսը, Շվան, Կանոնիկոս Մաք-Քօլ, Պրօֆէսօր Բիլծ, Լօրդ Մօնկվէր, Սերբիայի դեսպանը և ուրիշ շատ շատերը:

Նախագահ դը Կօնստան կարդաց բազմաթիւ ուրիշ հայասէրներու համակրական նամակները, որոնք ցաւ կը յայտնէին՝ որ անկարող եղան ներկայ ըլլալ։ Դը Կօնստան իր գեղեցիկ ճառին մէջ շատ մը ուրիշ խօսքերու հետ աւելցուց: „Մենք իրաւունք ունինք մեր անձնական տառապանքներովը չի շահագրգռուիլ, բայց իրաւունք չունինք չի շահագրգռուիլ տառապող մարդկութիւնովը։ Ապա շեշտեց Անգլիոյ և Ֆրանսայի բարեկամութեան և անոր յառաջ բերելիք օգուտներուն վրայ նոյն իսկ Արևելեան խնդրոց մէջ։ Իր ճառը աւարտեց հետևեալ խօսքերով: Ձը դադարինք նշաւակելէ Սուլթանի կառավարութիւնը իբր ոճիր և իբր ամօթ մեր քաղաքակրթութեան. բայց միանգամայն հրաւիրենք բոլոր քաղաքակիրթ ժողովուրդները որ մեկի միանան վերջ դնելու համար այս խայտառակութեանը որոնց պատասխանատու են իրենք: Դէպի այս խնդիրը պիտի կոչենք ոչ միայն պետական մարդիկ, խորհրդարանները, փիլսոփաները, բանաստեղծները, և մարդասէրները որոնք թերևս Անգլիոյ մէջ աւելի բազմաթիւ են քան այլուր, այլ բոլոր այն մարդիկը որոնք կ'արտադրեն՝ աշխատութեան մարդիկը":

Ապա խօսք առաւ Սաութվօրկի եպիսկոպոսը և յայտնեց որ Ջէյմս Բրայս ամենանշանակելի անձն է նախարարութեան մէջ, որ կը շարունակէ լորդ Լէնզդաունին դժբախտաբար կիսաւարտ ձգած գործը։ Դոկտոր Ռէյնօլդս որ երկար տարիներ Հայաստան ապրած է, ողբալի մանրամասնութիւններ տուաւ երկրի մէջ տիրող սովի և թշուառութեան մասին որոնք կոտորածէն ողջ մնացողները կը սպառնան ջնջել։

Մեր թանկագին բարեկամ Պիեր Քիար յիշեցուց որ միևնոյն այդ սրահին մէջ 18 ամիս առաջ նոյնանպատակ ժողով մը տեղի ունեցած էր, որը ցարդ մեծ արդիւնք մը չունեցաւ և այդ բանին պատասխանատու է

